



ՄԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ


ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ	Կախարդութիւնք (Բանախօսութիւն Պ. ֆ. Ռէ-նիսուի)	* * *
ՎԷՊ	Գնանք ընթերէլ (Տիգրիսի կեանքից)	Վ. ֆ. ՓԱՓԱԶԵԱՆՑ
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ	Կրանդ. զօրապետին թաղումը	ԵԱՆՔԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Խանդաղանք առ Զարուհի	ԱՆԱՆՈՒՆ
ՔԱՂՈՒԾ ՇԱՐԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Աղգային	
ՍԻՄՈՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղալիէ տը Մոնթէքէն) Թարգմ.	Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման.
»	վեցամսեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դան. արծաթ
Մէկ թերթին գինն է	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛րեւէ գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս լրագրաց
Ղալաթիա, Նորատուրկեան խան



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ՊԵՐԱՐԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐՍՍ

Ղալաթիա, 6 Սեպտեմբեր

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 աժիւ Լոնտոնի վրայ պանքայի)	109 5/8
3 » » » (վճռակն)	109 1/4
3 » Բարիլի » (պանքայի)	22
» » » (վճռակն)	23 07 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Դոնսոյիտի

Ղալաթիա

Երեկ Երեկոյ Գոյ. (Միաց. Ը. Սէրի Գ. Կ. 17 37	
Պորտային Գոյուհէն վերջը »	17 36
Բերայի մէջ	»
Առաւօտեան Գոյուհէն »	17 36
Բարձրագոյն Գին »	17 36
Նուազագոյն »	17 35 1/2
Կէս օրին	17 36
Փոխառութիւն 1858) A. Սէրի Գ. Կ.	33 20
» 1862)	»
» 1860)	»
» 1883) B. »	48 25
» 1872)	»
» 1865)	»
» 1869) C. »	17 35
» 1873)	»

Իւնիֆիէ եգիպտական

Երեկ Երեկոյ Գոյուհէն	73
Առաւօտեան Գոյուհէն Գ. Կ.	73
Կէս օրին	73

ԲՈՒՆԵՏՈՒՄ

Սօսիէթէ Երեկոյ Գ. Կ. Ար. Լ. Բ. 3 25	
Քրէտի Երեկոյ	» » Գոյուհէն » 6 32
Պանքա Գոյուհէն	» » » » 4 30
Սոս. Դոնսոյի վրայ	» » » » 3 50
Բարձրագոյն »	» » » » 290
Բարձրագոյն Երեկոյ	» » » » 42
Օպիկոսիտի առ Բրիտիէ	» » » » —
Բարձրագոյն Լաւրիտի	» » » » 56

ԸՆԲԱՅՔ ՂԱՐԱՆՈՅ

Օսմանեան ոսկի	100
Օ ֆրանքոն »	87 33
Արգիւտական ոսկի	110 16
Բալ Իմբերիալ	90 17
Քրիմի »	51 20
Բաւարի Թիւրքիալ	9 11
» արժաթ	89 30
Ֆիորին »	8 35
Մէծ. արծ. (տարբ.)	108 3
Վեցնոյ »	102 25
Հինգնոյ »	102 25

Մէթալիք	»	98
Պղինձ	»	—
Թիւրքիալ	»	—

ԵՐԵՂԱԿԱՆ ՊՈՐՍՍ

Լոնտոն, 17 Սեպտեմբեր, Ժամ 5 վայր. 15 Երեկոյ	
Սէրի Գ. Կ. Կ. 100 1/8	
Օսմ. » Սէրի Գ. Կ. Գոյուհէն »	16 1/2
» » » Գոյուհէն »	16 7/16
» » » Գ. Կ. »	34
» » » Բ. »	19
» » » Գ. »	16 5/8
Օթոման 1871	71 1/2
Փոխառութիւն 1877	85 1/4
Պանքա Օթոման	41 5/8
Ռաւազական փոխառ. 1873	95 1/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիէ)	66 1/8
» առանձն. (Երեկոյ)	90 1/8
Տայրա Սանիէ	63 7/8
Տոմանիալ (փոխառ. Բոլիւր)	87 1/4
Հոնգարական պարտաւճար 40/0	—
Փոխառութիւն Բարիլի վրայ	—

Ղալաթիա, 17 Սեպտեմբեր, Ժամ 4 Երեկոյ

Փոխառութիւն Լոնտոնի վրայ	125 30
Օսմանեան Երեկոյ	20 70
Բարիլ, 17 Սեպտեմբեր, Ժամ 3 վայր. 15 Երեկոյ	
Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 90
» » 3 0/0	81 25
Օսմանեան Գոյուհէն Սէրի Գ. Կ. Գոյուհէն »	16 60
» » » Գոյուհէն »	16 55
» » Սէրի Բ. »	18 70
» » Գ. »	16 60
Օսմանեան Երեկոյ	42
» Բէտիի Բաժնեւճար »	—
Պանքա Օթոման	542 50
Գրէտի Լոնտոն	—
» Դոնսոյի »	1326 25
Բաժնեւճար Լոնտոն	—
Սուրի Զրանք »	2055
Ռաւազական 5 0/0 1877ի	99 1/4
Իտալական Ռանթ »	96 05
Եգիպտական միացեալ	333 75
Սպանիական (արտաքին)	56 17/32
Բրիտիէ Թիւրք »	395
5 0/0 Հիւնսական	317 50
Զէք Լոնտոնի վրայ	25 25

ԲԱՐԻԼ ԲԵԹ ՊՈՐՍՍ

Բարիլ, 17 Սեպտեմբեր, Ժ. 10 վ. 30 Երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	109 87 1/2
Օսմանեան Գոյուհէն Սէրի Գ. »	144 Բարձր Զէք
Իւնիֆիէ Եգիպտական	—

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ՍԵՊՏԵՄԲԵՐ 7

ԹԻԻ 3786

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

ԿԱԽԱՐԴՈՒՂԻՆԵՐ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ Պ. Փ. ՌԵՆԻՍՄԱՆԻ

Տեքթ. Փ. Ռենիսմ. Սոսպոնի (Փարիզի Գիտական Համալսարանի) բնախօսական գործանոցի փոխ-տե-սուչն է, որոյ առաջին տեսչի Պ. Բօլ-Պէռի հետ շատ մը բնախօսական աշխատութիւններ ըրած է, ի գլուխ ամենեցուն շնչառութեան նկատմամբ: Այս գիտունն Փարիզու Երկրագործական Համալսարանի կազմախօսութեան և բնախօսութեան դասաւանդ է. երկար ատեն Փարիզու մօտ Սալբէթրիէի լուսնո-տական հիւանդանոցին ծառայած է, և այս մասնա-ճիւղին համար աշխատողներու առաջններէն է. քա-նիցս իւր անդամ Ֆռանսուայի Գիտական ընկերութեան այս նիւթին վրայ խօսած է ի Սոսպոն. հետեւեալն վերջինն է եւ ամենէ ճոխն զոր բնախօսեց 1882 ի մարտ ամսոյն մէջ, եւ զոր հրատարակեցին գիտական հանդէսներն եւ թարգմանուեցաւ եւրոպական լե-զուներու. կը յուսամ թէ զայս հայերէնի թարգ-մանելով «Մասիս» ի բանասէր ընթերցողաց խիստ հետաքրքրական և իմաստալից նիւթ մը տուած պի-տի լինիմ, որ շատերու կասկածներն պիտի փա-րատէ և այլոց այս մասին գաղափարներն պիտի լու-սաբանէ:

Տիկնայք եւ Տեա'րք.

Ղեւտական Գրոց քսաներորդ գլխոյն մէջ կը կարդանք. «Այս կամ կին յորոց լինիցի վհուկ կամ գէտ՝ մահու մեռցի» . այս նա-խադասութիւնն ռաբաժիդ անօթոց, մահա-ռիթ գիւտերուն եւ ամենասոսկալի պատե-րազմներու չափ աղետալի եղաւ մարդկա-լին աղղին. աստի սկիզբն առած են այն ա-

մէն մեծ հալածումներն որոց տխուր պատ-կերն եթէ ձեզ նկարագրեմ, չ'գիտեմ ի՞նչ զգացմամբ պիտի մեկնիք այս սրահէն, բայց ըստ իս չիք ինչ աւելի արտմեցուցիչ քան այս նիւթին իմաստասիրութիւնն որոց եզ-րակացութիւնն միայն ձեզ պիտի հաղոր-դեմ:

Դուք կուգաք հոս ամէն շաբաթ՝ մարդ-կային ճարտարութեան հրաշալի գիւտերուն վրայ ճառեր լսելու. մի քանի ժամուան մէջ ձեզ պարզեցին ներկայ դարուս յղացած մեծ եւ մեծ գործերն, միշտ ուրախ կը մեկ-նէիք աստի, ազատ ձեր հոգւոյ առաջ, սէգ եւ հպարտ մարդկութեան վրայ եւ սար-ծենկոտ ֆրանսական հայրենեաց համար՝ որ այս փառաւոր գիւտերու մեծ մասին ծը-նողն է:

Այս օրուան բանախօսութիւնս սեւ բիծ մը պիտի լինի այս լուսոյ ծփանաց մէջ. ա-նարժան պաշտօնս պիտի լինի ձեզ ծանօ-թացնել անցեալ դարերու յիմարութիւններն եւ ընել նոցա տխուր նկարագիրն. բայց եթէ երբէք համեմատեալ պատալիս, պիտի կըր-նամ գամ մի եւս ապացուցանել թէ՛ գի-տութիւնը մեծ դեր ունենցած է պատմու-թեան մէջ եւ աղգեցութիւն մը մարդկային մտայ եւ սովորութեանց վրայ:

Միջին դարու մէջ և նա մանաւանդ նորա սկիզբներն էր որ կախարդութիւնն աւելի ծաղկեցաւ եւ յայնժամ ըրաւ իւր ամենա-մեծ զոհերն:

Հնգետասաներորդ եւ վեցտասաներորդ դարերն ամենէն ապականեալը կը թուին այս սոսկալի յիմարութեամբ: Հին դարուց մէջ կախարդներու կը հաւատային եւ զա-նոնք Աստուծոյ ներշնչեալ անձեր համա-րելով առ ահի կը պատուէին, եւ երբէք

չէին համարձակեր նոցա միտասելու : Յունական եւ Հռոմէական դիցաբանութեանց մէջ դժոխոց չ'աստուածն Ողիմպոսի տիրոջ հակառակորդն չ'է, այլ նորա եղբայրն, դաշնակիցն եւ ի հարկին նորա կամաց գործակատարն իսկ . կախարդն միոյն կողմէն միւսին դէմ գինուոր մը չ'էր, այլ երկուքէն եւս ներշնչեալ էակ մը, եւ անոր համար ի պատուի էր :

Միջին դարու մէջ ընդհակառակն կրօնական գաղափարներն ուրիշ դարձուածք մ'առին . կը հաւատային թէ երկու հաւասար էակներն (Աստուած եւ Սատանան), իրարու հետ կը մրցէին իրենց իշխանութեան համար, սատանան Աստուծոյ անձնական թշնամին է եւ թէ Աստուած թէ՛ պէտ կարող զայն նուաճելու, բայց թոյլ կուտայ նա նեղել մարդկութիւնն որպէսպիսինքն իրենց չարքաշութեամբն կարողանան արժանիք վաստակիլ, եւ կ'ընդունէին թէ նա մարմնացեալ չարութիւն է որ կը ջանայ մարդկան հոգիներն առ ինքն դրաւել եւ զայնս փրկութենէ գրկել . կը մրցի, կը դիմադրէ մարդուն կամաց մինչեւ վերջին կէտն եւ չի ձգեր զայն . հին դարն ստեղծեց զՍրմիգդ եւ զՍրհմն, իսկ միջին դարն Մաքիթայն աղանդն, ըստ որոց սատանան եւ իւր անթիւ զօրքերն կը հակառակին Աստուծոյ եւ իւր ընտելեաց : Աւստիկ նոցա այս կարգի նիւթերու վրայ ունեցած գաղափարներն :

Երկու կողմէն հաւասար զօրութեամբ կը կռուին . Ամենակարող էակն ունի իւր երկնային բանակն, սատանան ունի նաեւ իւր սանդարամետական անթիւ զօրաց բազմութիւնն լէգէոններու եւ բանակներու բաժնուած, որոց զօրագլխոց անուններն են Բէհհեղդերուդ, Ազմոտէոս, Մագօկ, Տագօն, Մագօն, որք ունին իրենց փոխանորդներն եւ որոց իշխանութեան տակ կը գտնուի դիւաց ստուար բազմութիւնն հրեշտակաց թուոյն հաւասար, որք իրարու հետ ճակատ առ ճակատ կը պատերազմին :

Ամէն մարդ իւր սահապան հրեշտակն ունի որ զինքն ի բարին կ'առաջնորդէ . ունի նաեւ իւր դեւն, որ ի չարութիւն կը թելադրէ . իւր (մարդուն) ազատ կամացը կը մնայ զմին կամ զմիւսն ընտրել : Երկու կողմէն ալ մի եւ նոյն միջոցները կը գործադրուին եւ այս ալ Աստուծոյ թոյլտուութեամբն,

որ թոյլ կուտայ զիւր թշնամին հաւասար զօրութեան մէջ : Աստուածային էակն ի պահպանութիւն մարդկան ի նոսա կը բնակէր . նախանձու սատանան կը ջանար բնակիլ նուազ հսկեալ (Աստուծոյ) մարդկան մէջ, զայնս կը դրաւէ, նոցա բերնէն կը խօսի, կը պղծէ զանոնք եւ նոցա վրայ կ'իշխէ . մինչեւ իսկ ամենապիղծ անասնոց մէջ կը բնակի, յորոց մահը միայն զիրենք դուրս կրնայ հանել, եթէ յանուն երկնից դիւահանութիւնն չի կրնայ երբէք յաջողիլ :

Դուք կրնաք ի միտ առնուլ այս կարգի գաղափարի մը մարդկան ներշնչած սարսափուն . իւրաքանչիւր որ հանապաղ կ'երկնչի թէ մի գուցէ իւր երկնային սաշտոյսն յաղթուի եւ չիյնայ ընդ իշխանութեամբ սատանային առանց օգնութեան եւ գինու : Պիտի տեսնանք քիչ մը վերջ թէ այս կարգի վախն յիմարութենէ շատ հեռի չէ :

Սատանային մարդկան մէջ բնակիլն իւր միակ գէնքը չ'է . նա աւելի գայթակղեցունցիչ է . երկնից Աստուծոյ իրեն տուած կարողութեամբն ազատ է իրեն հաճելի թուած կերպարանքն առնուլ . կը տեսնեն որ թշուառ եւ նոթի լքեալ մահամերձ կնոջ մը կ'երեւի յանկարծ, ձեռքերն լի ոսկով եւ արծաթով, կը խոստանայ նախ թողուլ իւր այս ամէն հարստութիւնն եթէ երբէք նա հաճի իրեն հետ դաշնակցիլ եւ արեամբ ստորագրել : Դեւերն ամէն տեղ կ'երթան, զայնս կը գտնենք դղեակներու եւ խորհիթներու մէջ, անտառաց խորերը, ամէն ուրէք նա իրեններն ունի, որք սպառաւոր են փորձել զամէն անոնք որք վայրկեան մը յԱստուծոյ լքեալ կը կարծուին :

Եթէ այսպիսի խեղճ վիճակի մէջ մարդ հաճի նմո գաւառիլ, կը լինի Կախարդ, այս աշխարհի մէջ նորա ծառայ եւ հանդերձելոյն նորա զերին : Աստուած ունի իւր սաշտոնեայներն եւ հաւատարիմներն զորս կը հաւաքէ ամէն կիւրակէ իւր տաճարներուն մէջ, սատանան ալ իրեններն ունի զորս կը համախմբէ ի գիշերի հեռաւոր ամայի դաշտավայրից մէջ . այս համախմբումը սաղապանաւոր :

Միջին դարու աստուածաբանական գաղափարաց մէջ կը տեսնուի որ կախարդն բարութեան բանակէն հեռացած եւ սա-

տանայի խուժանին մէջ մտած է, յաշխարհի նորա գերի եղած է, կը հսկատակի նմա, կը գործադրէ նորա հրամաններն եւ այն ամէն ոճիրներն որ իրեն հրամայուած են տէրոջն հաւատարիմներու դէմ: Ուրեմն կախարդն սատանային կոյր գործակատարն եւ մարդկային ազգի վատ թշնամին է, դադտնաբար հիւանդութիւններ եւ թուճաւորութիւններ կուտայ: Իւր գործած ոճիրներն՝ ոճրոց ամենէն ժանտն եւ ամենէն սոսկալին են: անոր համար որ եւ է գութ ունենալու չէ: զայս կը հաստատէ ղեւտական գրոց այն խօսքը թէ «յորոց լինիցի վէճակ կամ գէտ, մահու մեռցի»:

Քիչ մը վերջն այս ամենուն վրայ մանրամասնորէն պիտի խօսիմ: այժմու ձեզ ըրած ընդհանուր ակնարկս նպատակ ունի միայն կախարդի մը ինչ ըլլալն հասկնել: Բայց թէ կախարդն, սատանային զինուորը եւ չարութեան պաշտօնեայն, ինչ վախճան կուենեայ, ասիկա դատաստանաց նկարագրութիւններն եւ հարցաքննութիւններն մեզ պիտի սովորեցնեն: Ես որ պատեհութիւն ունեցայ ծայրէ ծայր կարդալ այս կարգի դատաստանական թղթերու մեծ մասը, կը խոստովանիմ թէ քան զայս աւելի տխուր բան մը չիկայ: Անհեթեթութիւնն տաղտկալոյն հետ կը խառնուի, ծաղրելին բարձրելոյն քով կը գտնուի, դատապարտելոց քաջութիւնը կը զարմացնէ, դատաւորաց անխելութիւնն. կը լքուցանէ, կ'ղգայ մարդ թէ յիմարաց մէջ կը գտնուի, բայց չի գիտցուիր թէ իրաւամբ ո՞րք աւելի յիմար են, ինքզինքնին զրպարտող խեղճերը, թէ զայնս դատապարտող աստուածաբանք: արդարեւ տխուր եւ ցաւալի է այսպիսի գրոց ընթերցումը, որպէս կը վկայէ հոգեակաւոր գաղտնիքի բժշկի դասատու մը:

Միշտ կ'ըսէ թէ կախարդուհին յուսահատութեան արարածն է. արդարեւ այն ատեն թշուառութենէ, վիշտերէ եւ ցաւերէ կը ծնէր այս կարգի յիմարութիւնը, բայց այսօր այս ամէն պարագայներ տեղի կուտան մեղամաղձական եւ ամբարտաւան բանդադուշանաց: յիմարութեան ձեւը տարբեր էր եւ յարմար այն դարու բարուց: Բայց հետեւանքն միեւնոյնն էր:

Երբ մը ամէն երեկոյ վայելուչ եւ դեղեցիկ ձիւաւոր մը կը տեսնար (այս երեկոյթ-

ներն կանանց կ'երեւին, նա մանաւանդ ջղալին կ'իներու որք աւելի ջղաճգային ախտին ենթակայ են): այս անձն երբեմն բաց դուռնէ մը ներս կը մտնէր, շատ անգամ յանկարծակի իրեն կը ներկայանար իբր թէ գետնէն դուրս ելնելով, քիչ անգամ անախորժ կերպարանք մը ունէր (Ուշադրութեամբ մտիկ ըրէք, ասիկայ դատաւորաց առջեւ ըրած նկարագիրներն են): շատ անգամ պիտակ հադուած էր, թաւշեայ սեւ գլխարկին վրայ կարմիր յետուր մը կար, երբեմն ալ իշխանաց նման ակամբք եւ գոհարօք ընդ ելուզեալ գեղեցիկ բաճկոնակ մը կը հագնէր: յանկարծ, կամ այս կնոջ հրաւիրանքն կը ներկայանայ նմա օր մը եւ կ'առաջարկէ կախարդուհւոյն հարստութիւն եւ իշխանութիւն տալ: Իւրեան նմա կը ցուցնէ իւր գլխարկն ի ռսկելով եւ արծաթով, բայց այս ամէնը վաստկելու համար պէտք է հրաժարի մկրտութենէն, ուրանայ զԱստուած եւ հոգեւոր մարմնով սատանային անձնատուր լինի:

Ինչպէս կը նշմարէք ասի իւր ամէն պարագայներովն բանդադուշանք մ'է: զանազան վիշտերով տառապեալ կ'ին մը երբ յանկարծ կը տեսնայ մանկութենէն ի վեր իրեն բազմիցս պատմուածին նման երեւոյթ մը, որոյ սատանան լինելուն այլ եւս չկասկածիր, վատահ է որ ամէն ինչ իրեն պիտի պարգեւէ, եթէ հաւատայ ինքեան: Մեր այս օրեայ բանդադուշոյններն համանման են: Իշխաններ եւ վեհապետներ կը տեսնան, որք իրենց չքանչաններ եւ նոյն իսկ երբեմն ալ վիճակներ եւ գաւառներ կը պարգեւեն:

Սատանան թէպէտ ներկայանալու համար կ'այլախոխուի, բայց ինչ լինելը չի ծածկեր, առաջին հարցման կը նկարագրէ իւր յատկութիւնները: Ընդհանրապէս պարզ գիտութիւն մ'է: Մինչեւ որ առաջին փորձին մէջ բոլորովին անյաջող չ'եղնէ, իրմէ մեծն օգնութեան չկոչեր: Նուիրական իշխանութեանց նման կարգ եւ օրէնք ունի, ամէն աշխատութիւններ բաժնուած եւ ըստ այնմ աստիճաններ հաստատուած են: Ըստ ժանգվեհի որ նուազ անհեթեթ դեւախօսներէ մին է, դիւաց բանակին մէջ 72 հատ Ղաւա, Մարգիւ եւ կոմսեր կան եւ 7,405,928 փոքրիկ գեւեր:

Դեւն, երբ փորձէ գրաւել զոք, ամէն

միջոցներ կրնայ ի դործ ածել (տեսէք ինչպէս բանդագուշանքն կը շարունակուի) չափանդամ կը խօսի Աստուծոյ եւ նորա բառութեանց վրայ :

Գեւ մը Տուէի մէջ Մարաջախտ Լուիզի կը հանդիպի՝ որ իւր էրկան հոգւոյն համար զոհ կ'ընէր, եւ կը պատուիրէ նմա Աստուծոյ աղօթել, համազելով որ նա երբէք զայն չի պիտի լքանէ . յետոյ գունաւոր փոքրիկ գնդակ մը կուտայ՝ նմա, որոյ յատկութիւնն էր դպածը մեռցնել . կասկածուելով որ Լուիզ Մարաջախտն այս գնդակն իր ընտանեաց մէջ դործածած էր, ողջ ողջ այրուեցաւ Վալանսիէնի մէջ : Ուրիշ անգամ մ'ալ Սէնթ-Լը-Տիւբի մէջ Մարաջախտ Լուիզի կ'երեւի, զայն կը համոզէ երթալ իւր էրկան հոգւոյն համար Սուրբ Աիլլէնի պատարագ մատուցանել . ասիկայ թէպէտ տրամաբանական չ'է, բայց մեզ բժշկացս համար մեծ արժէք ունի, վասն զի մեր այս օրեայ բանդագուշողներն անոնցմէ մեծ տարբերութիւն չ'ունին . ընդ երկար բանդագուշական յիմարանոցի մը մէջ ծառայելու չ'է հոն իշխանուհիներ տեսնելու համար, որք կը յայտնեն թէ իրենց տան սպասն կամ խոհանոցի ամաններն լուալէ վերջ իրենց արքունականներն պիտի ընդունին :

Մի՛ կարծէք թէ դեւն միայն չափահասներու կը ներկայանայ, ընդ հակառակն տըղաքները կը սիրէ . այս կարգի համաճարակ հիւանդութեանց ատեն տղաքներն ամենէն առաջ կը բռնուին : Քաթրին Փօրիս ութամեայ հասակին մէջ կախարդ եղաւ . իւր ընտանեաց բոլոր անդամները յիմար էին, եւ սատանային դաւանելն կը խոստովանէին : Մատիլիէյնը 13 տարեկան հասակին մէջ կախարդ եղաւ, եւ այսպէս շատեր :

Գանք այժմ գրաւման եղանակին . դեւըն իւր հարստութիւններն կախարդուհւոյն տալէն վերջ, իւր սնունդ կ'ըսէր նմա . կախարդուհեաց մեզ ներկայացուցած դեւերն Սուրբ Գրոց մէջ դործածուած անուններէն եւ ոչ մին կը կրէին . գեղջկուհի մը՝ իւր բանդագուշանաց մէջ՝ գեղջկական անուն մը կուտար իւր դեւին, որպէս Ժօլի, Վէռկալորն, Բուլյօն, Վէռուոյ, Ռօպէն, ևն : Սատանան Աստուծոյ

դէմ նախանձելով իւր հպատակն կը մկրտէր եւ նմա նոր անուն մը կուտար, երբեմն սուրբի մը անուամբ կ'անուանէր, ապա նորա վերայ նշան մը կ'ընէր (ասիկայ մեծ նշանակութիւն ունի), անոր թեւին կամ ճակտին եւ կամ ականջներուն ետեւն մաստով կը դրօշմէր . անկից վերջ, այս կէտն անդգայ կ'ըլլար, եթէ հոն խայթուած իակ ընէին, ցմահ չէր զգացուեր, արեան կաթիլ մ'իակ չէր վազեր . պիտի տեսնաք, թէ այս կէտին համար ինչէր կ'ընէին կախարդաց չարչարանաց ատեն, այդ անդգայ կէտն դիւական նշան (stigma diaboli) կ'անուանուէր :

Սատանան հանապաղ իւր գրաւածին այցելութիւն կուտար, զայն կը մխիթարէր, եւ վերջապէս դժոխայնոց կարգն անցնելու պաշտօնական թղթեր կուտար նմա . ասիկայ երկու կողմէն կնքուած դաշնագիրն էր . ընդ հանրապէս արկւնով կը գրէին, դեւն իրեւ ստորագրութիւն իւր թաթը կը կախէր : 1623ին Ժիլպէս Տըվօյի կողմանէ հրատարակեալ աստուածաբանութեան մը մէջ ոգիներու կողմէ կնքուած ստորագրութեան մը ճշմարիտ օրինակը գտայ եւ որ աւասիկ տեսէք մատերուն տպած տեղերն կարմրած եւ այրուած են : Աւասիկ ուրիշ դաշնագիր մ'ալ ուր ոգւոց ձեռաց նշաններն կը տեսնուին . քիչ մը վերջ պիտի ցուցնեմ աղային Թանդարանի մէջ գտնուած սատանային ձեռքը դրուած նամակ մը որ տառասխաններով լի է :

Պէտք չէ հաւատալ, պարոններ, որ դեւն իւր խոստովաններն կը յարգէր . իւր շարութիւնն անմիջապէս յայտնի կ'ըլլար . իւր մեկնելէն վերջ կախարդը կը տեսնէր որ իրեն տրուած ոսկիներն եւ արծաթները թուղթի եւ փայտի կտորներու կոյտի մը վերածուած են . ներկայիս յիմարներն ալ մի եւ նոյն անախորժելի զարմացումն ունին, երբ երեսն բանդագուշանաց անցնելէն վերջ տեսնան թէ իրենց իշխանութիւնը, թաղն եւ դոհարեղէններն իրականութիւններ չեն, այլ առանց արժէքի հասարակ իրեր :

Զեզ կ'ըսէի, թէ սատանային համար ամէն միջոցներ լաւ են եւ ամէն այլակերպութիւններ կարելի է . արդարեւ եթէ մեծ սուրբ մը կամ մեծարելի անապատական մը գայթակղեցնել ուզէ, իւր դեւուհեաց լեզունէն

չբնադադէմ դեւութի մը կը խրկէ (դիւաց բանակին մէջ կրնէր ալ կան եղեր) . այս միջոցով շատ անգամ կը յաջողէր , երբեմն ալ պարտեալ ետ կը դառնար . կը յիշէք անշուշտ սուրբ Անտօնը :

Ինչպէս շատ անգամ , լաւ խաբէլու համար , դայն հօտի մը մէջ հովուի ձեւ կ'առնու , նոյնպէս ալ սատանան վանքի մը մէջ անապատականի կերպարանք կ'առնու . ահաւասիկ հին նկար մը , որ կը ցուցնէ զսատանան վանականի հագուստով , ասիկայ սուրբ Ալօֆոնուայի վանքը մտած է , բայց հոն իւր հաւու ոտքերէն ձանչցուելով՝ ալընկոր կը վերադառնայ . վերջապէս եզրակացնելով կ'ըսեն : Կախարդութիւնն եւ կամ աւելի գիտնօրէն խօսելով դիւամոլութիւնը (*) (démonopathie) կարգ մը բանդագուշանքներէ կը բաղկանայ : Կարելի է զարմանաք ամէն կախարդաց բանդագուշանաց նոյնութեան համար . ասոր զարմանալու չէ . դարն կ'որոշէ յիմարութեան եղանակները . հին ատեն յիմարները դեւեր եւ հողիներ կը տեսնէին , այժմ ելեկտրական սօսկիներ եւ ելեկտրամագիստներ (electroaimant) կ'երազեն . կը յիշեմ որ Սալբէթուիէի յիմարանոցին մէջ ներքին աշակերտ եղած ատենս բանդագուշող հիւանդ մը կըշուական ելեկտրականութեան այնքան սիրահարեալ էր , որ յախճապակիի ելեկտրականութեան գէշ հաղորդիչ ըլլալն կրկնելով՝ մինչեւ երեկոյ կը պտըտէր , մինչ իսկ գլուխըն յախճապակէ կոնք մ'անցնելով կը բնանար . յիմարութեան հիմը մի եւ նոյն է , միայն արտաքին ձեւը ժամանակին համեմատ կը փոխուի :

Գանք մեր կախարդութեան . տեսանք , թէ ի՞նչ կ'ըլլայ իւր գոյութիւնը սատանային դաւանելէն վերջ :

Նախ պարտի նմա հնազանդիլ . եւ որովհետեւ չարութեան բանակին անգամ կը համարուէր , պարտ էր ծառայել սատանային եւ նմա օգնել իւր աշխատութեան մէջ . հմայութիւն եւ դիւթութիւն կ'ընէր եւ իւր կեանքն շատ անգամ խանգարեալ էր , ջլաշին ձկտմանց բուրհաններով (crise) որոյ վրայ սէտը է խօսիլ :

(*) Մատիոնութիւն մը որով մարդն բնականաբար դեւէ ըմբռնեալ կը կարծէ :

Կախարդաց պատասխաններն կարգաւորով միայն կարող ենք հասու լինիլ այն ոճիրներուն որոց համար զրպարտեալ էին : Պօտէն , Պօկէ տը Լանքսը , Նիդուա Ռէմի անուն դատաւորներն որք զանազան ժամանակաց մէջ դիւական դատաստանները քննելու պաշտօն ունէին , խնամօք եւ մանրամասնաբար մեզ նկարագրած են անոնց գործած ոճիրներն որք 15 հատ են , 10ը Աստուծոյ դէմ , իսկ 5ը՝ մարդկան . նախ կախարդներն Աստուած կ'ուրանան , զայն կը հայհոյեն , սատանան կը սալտեն , նորա հետ դաշինք կը կռեն , իրենց զաւակները սատանային կ'ընծայեն , զայնս կեանքէն առաջ կ'ապանեն , իրենց աղանդն տարածելու կը ջանան , սատանային կ'աղոթեն եւ վերջապէս բնութեան բոլոր օրէնքները կ'ուրանան :

Գատաւորներն մարդկան դէմ գործուած ոճիրներուն համար աւելի խիստ էին . զայնս կրօնից դէմ չէին համարեր , այլ հասարակութեան օրինաց դէմ , եւ որք միւսներէն կը տարբերէին գործուած միջոցներով . սատանան իւր առաջին այցելութեան ատեն կախարդին փոշի մը կը նուիրէ , որոյ մի փոքրիկ մասը բաւ է մարդու մը անունդին հետ խառնելով զայն յանկարծակի թունաւորելու եւ կամ զայն վտանգաւոր հիւանդութեան մ'ենթարկելու :

Շատ անգամ կախարդութիւն մը կը բաւականանայ անցորդի մը վրայ այս փոշիէն ցանել զայն անմիջապէս մեռցնելու համար . ուրիշ ատեն հարկ էր մի քանի կախարդական բառեր արտասանել : Պօտէն եւ Վիէու մեզ պահած են այս սարսափելի բառերն , եւ եթէ սոցա (բառերուն) ձեր վրայ ըրած աղդեցութենէն չէք վախնար , սխալ համարձակիմ զայնս հնչել , եւ աւասիկ եօթ , ալլանապաու , եւ ապիւլ , եւս լիէլ աֆաֆ օօթել , ցեցեա լեօլեիա ելիա իոշեօս ալանալեօս իֆա ելի ֆաիա :

Սոյն փոշին նորածին տղայոց դիակովը պատրաստուած էր եւ նա մանաւանդ նոցա սրտերովն . մեռեալներու ոսկորն ծեւելով եւ արջնագորտերու (crapaud) փուրին հետ խառնելով ալ կը պատրաստուէին : Շատ անգամ կախարդութիւն դատապարտեալ էր արջնագորտեր բուժանելու եւ զայնս արածել տանելու համար . ասիկա դժուարաւ կը հասկցուի : Այս

փոշիէն զատ իւղ մ'ալ ունէր կախար-
դուհին, բայց կիւարութեան գծուարու-
թեան համար խիստ քիչ անդամ կը գործա-
ծէր. այս իւղն մեռեալներու ճարպով եւ
ճարագորով (mamragore) պատրաստուած
էր. սապային մէջ անոնք ամէնը պիտի տես-
նենք: Այս փոշին հասարակաց ձեռաց մէջ
որ եւ է ազդեցութիւն մը չունէր. ազդե-
լու համար միայն կախարդուհիէն գործած-
ուելու էր. ասի ազդեցոյց է ողն փոշիներ
բուն կախարդական ըլլալուն:

Եթէ կախարդուհին զիւթեալ փոշին
հունձքերու վրայ ցանէր, կը փճանային, հողն
թրթուրներով, տկանջամուտներով, արջնա-
գորտերով, եւ ահագին օձերով կը ծած-
կուէր. եթէ ուզէր, միեւնոյն փոշիով եւ մի
քանի կախարդական բառեր արտասանելով
կրնար երկրագործի մը բոլոր հունձքերն
իւր դրացոյն գալալն մէջ անցունել: Կա-
խարդներն կրնային նաեւ երկիր մը անձ-
բելի հեղեղներով եւ կարկուտով ծածկել.
ասոր համար բաւ էր գաւաղանով մը լճակի
մը ջուրը ծեծել:

Նրբ մէկն զգար թէ՛ կախարդուհւոյ չա-
րութեանց միոյն ենթակայ ըլլալու վրայ է,
անկէց զերծուելու համար խել մը միջոցներ
կը գործածէր. շատ անգամ գիււհանու-
թեան կը դիմէին. բազմաթիւ կախարդա-
կան բառեր գեւն հանելու յատկութիւնն
ունէին. ահաւասիկ 400 երեսներէ բաղ-
կացեալ հատոր մը որ միայն գիււհանու-
թեան միջոցներու նկարագիրն կը պարու-
նակէ. նոյն խակ սոցա բազմաթուութիւնն
կրնայ ապացուցանել թէ նոյա եւ ոչ մին
ազդեցութիւն ունի. ձէգվիթներն, Դոմի-
նիկեաններն եւ Փարուչիներն միայն գի-
ւհանութեան առանձնաշնորհութիւնն ու-
նէին:

Կախարդեալ կարծեցեալն առաջին ան-
գամ իւր կախարդն կ'որոնէր. սորա համար
բաւ էր հողէ նոր ամանի մը մէջ ասեղներ
եւ կաղնիի փայտ դնել եւ խաշել. յայնժամ
ով որ առաջին անգամ իւր դէմն ելնէր,
չարութեանց հեղինակ կախարդուհին այն
էր. անմիջապէս կ'երթար ծանուցանել եկե-
ղեցական պաշտօնէից, (ինչպէս կը տեսնուի
այն ատեն այցելութիւններ տալն փնասա-
կար էր). կախարդուհին ճանչլէ վերջ ա-
նոր կ'աղաչէին զինքն ազատել, ուստի կա-

խարդուհին սատանան կը հրաւիրէր եւ նը-
կանակ մը հացը օրհնեալ ջուրի մէջ կը թաթ-
խէր, եւ ասով ամեն ինչ կը լրանար (սա-
տանան օրհնեալ ջուրն կը խառնէ):

Եթէ կախարդուհին կը փնասէր ուրիշ-
ներուն, կարծելու չէ թէ իւր կեանքն մըջ-
տընջեցական տօն մ'էր. արդէն պատեհու-
թիւն ունեցայ ըսելու թէ՛ իւր ստացած
տիկիներն եւ գոհարներն աննշան բա-
ներու կը փոխադրուէին: Եթէ կախարդն
դոյզն անհնազանդութիւն մը գործէր, իւր
գեւն զայն կը ծեծէր, կը գանակոծէր, նո-
րա մէջն կը բնակէր, զայն աշակէր կ'ընէր
ինչպէս որ կ'ըսէին. գեւն նորա կերպարա-
նին տակ կը գտնուէր, նորա բերնէն կը
խօսէր, եւ մինչեւ իսկ Աստուծոյ դէմ հա-
յոհել կուտար. այն ատեն խել մը երե-
ւոյթներ տեղի կ'ունենային, որոց նկարա-
գիրն բժշկական արհեստին չահաւոր նը-
պաստաւոր կրնան լինիլ: Այս երեւոյթնե-
րուն վրայ ձեր ուշադրութիւնը պիտի դը-
րաւեմ, որովհետեւ զայնս այսօր հիւանդու-
թեան մը մէջ կը տեսնանք, որք պիտի ծա-
ւայեն մեզ բացատրել կախարդութեան մէջ
գտնուած ճշմարտութիւնները:

Մարդուն եւ սատանային միջեւ
մենասարսն գիււհանութեան ատեն
կ'սկսէր. գեւն իւր զոճը չկորուսանե-
լու համար անոր մէջն կը բնակէր, զայն
գետինը կը տապալէր եւ սարսափելի գել-
մանց կ'երթարկէր. դրացիներն կը խըռ-
նէին, եւ ոճրական դատաստանը կը մօտե-
նար:

Կախարդի մը բուրհանի նկարագրու-
թիւնն երկար կը լինի. պիտի բաւականա-
նամ 1656 ին Ամսթերտամի մէջ Արրահաժ
Բալէնի հրատարակած գիււհական գրքէն մի
քանի պատկերներ ցցունել որ այս զանա-
զան երեւոյթներն ձեռք պիտի ծանօթա-
ցնեն:

Շատ անգամ ճաշի ժամանակ կախար-
դուհին ճշելով յանկարծ գետինն կը տա-
պալէր հազար եւ մէկ գեղամներով, իւր
դէմքն բոլորովին կը փոխուէր եւ խել մը
յիմարական ձեւեր կ'առնուր: Տէսէք այս
պատկերներուն վրայ իւր հետ ճաշողներուն
սարսափն. անգամներն կը խաղան, կ'աղա-
ղակէ, բերնէն փրփուրներ կը վազէ, վեր-
ջապէս գեւն կը հաճի մեկնիլ, եւ ընդ-

հանրապետ գլխահարին փախելովն դուրս կ'ելնէ :

Ահաւաստիկ միեւնոյն դրքէն ուրիշ պատկեր մ'ալ որ կախարդուհի մը կը ներկայացնէ համանման վիճակի մէջ . բուրհանն ուրիշ կերպով կը վերջանայ . ներկայ եղողներն խիստ մեծ դժուարութեամբ կը ջանան արդեւո՛ւ հիւանդն , որ ինքզինքն պատուհանէն վար նետել կ'ուզէ : Երբորդ մ'ալ որ ընտանեկան խնջոյքի մը մէջ յարկարծ դեռին կը տասպալի . կը խնդրեմ ուշադրութեամբ դիտեցէք թէ ինչպէս թեւերն դէպ յետս դարձած են . այս նշան քիչ մը վերջ պիտի յիշեցնեմ :

Ետտ անդամ ալ կրօնական արարողութեանց և ծէսերու ատեն գլխահարաց բուրհանն կը բռնէր . ահաւաստիկ Բալէնի գորքէն առնուած պատկեր մը որ ձեզ կը ցուցունէ եկեղեցոյ մը մէջ բարոյշին դիւաց կարողութեան վրայ ճառած ժամանակը գլխահարի մը բուրհան բռնուին : Երբ մարդ ուշադրութեամբ կարգայ այս ամէն նկարագիրներն , կը տեսնայ թէ գլխահարաց գեղեմներն խիստ սարսափելի աստիճանաց կը հասնէին . տեսէք այս հին պատկերն որ կը ցուցունէ խեղճ գլխահարուհի մը գլուխն ի գետին եւ ոտքերն օդին մէջ կեցած . ուրիշներ ոտքերնին եւ գլուխնին միայն գետնին վրայ դրած , փորերնին բարձրացուցած , աղեղնաձեւ կամուրջ մը կը ձեւացնեն , քիչ մը վերջ յանկարծ ինքզինքնին յօդս կը նետեն , եւ այսպէս խել մը շարժումներէ վերջ բուրհանն կը վերջանայ . այս ամէնուն վրայ պիտի խօսիմ երբ գլխահարական համաճարակ հիւանդութիւնն քննեմ . կը փախաբլիմ այժմ սապա անուանեալ երեւոյթից վրայ խօսիլ , որ կարգ մը բանդագողչանքներէ բաղկացեալ է :

(Երասնակէ)

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(ՎԵՊ ՏՓՂԻՍԻ ԿԵԱՆՔԻՅ)

Ժ .

ԵՐԿԱԹԸ ՏԱՔ ՏԱՔ ԿԸ ԾԵԾԵՆ

Կարապետովը Մտնէյի խանութից մտաւ իւր խանութը եւ ուշք չը դարձնելով

իւր գործակատարներին գործած աղմուկներին , որոնք երգվում էին յաճախորդներին որ ապրանքները փտած չեն , երիտասարդին դեղեցիկ սիրուհի , աղջիկներին հարուստ ամուսին , կանանց թանկագին զարդեր եւ արանց գեղեցիկ կանայք ունենալ էին բարեմաղթում , նոցա զլխին կապելու համար վատը լաւի եւ կոպէկանոցը մանէթանոցի տեղ , ասում ենք , Կարապետովը ուշք չդարձնելով այդ բոլորին , քաշուեց խանութի վերին անկիւնում , նստեց եւ մի քանի անգամ գլուխը բորելուց յետոյ , խօսեց ինքն իրեն .

— Գանի տաք է , ծեծենք , լայնացնենք եւ մեր ուղած գործիքը շինենք , ապա թէ ոչ կը պաղի եւ վաճ ինձ այն ժամանակ . . . լաւ գործ է , 5000ի դէմ 2000 դնել եւ մի աղջիկ , որոյ արած ծանրութիւնից էլ պիտի ազատուի . . . լաւ շահ է . . . արդէն աղջիկը ստեղծուած է ամուսնանալու համար եւ միթէ Մտնէյից լաւ ամուսին կը լինի . հարուստ , առողջ , խելօք — հըմ , ի հարկէ իմ համեմատութեամբ տխմար . . . բայց ինչ եւ իցէ . . . մէջ տեղ 5000 մանէթ շահում ենք մի աղջիկ ամուսնացնելով . . . լաւ շահ է . . . բայց երկաթը քանի տաք է պիտի ծեծել :

Եւ Սիմոնը այդ երեկոյան շուտ փակեց խանութը , առանց դէս ու դէն նայելու արագ քայլերով դէպի տուն գնաց եւ այնտեղ հասաւ ժամը 7 ին :

Տիկին Օլիւկան զարմացաւ , որ իւր ամուսինը սովորականից շուտ է եկել :

— Թէ՛յ պատրաստիր , ասաց զուարթ դէմքով Սիմոնը եւ ապա երբ աչքը չորս կողմը պտտցնելով վարդուհիին չը տեսաւ .

— Ո՛ւր է վարդուհին , հարցրեց :

Օլիւկան զարմացած նորա երեսին նայեց , որովհետեւ չէ՛ր պատահել երբէք , որ Սիմոնը հետաքրքրուէր վարդուհւոյ ուր լինելու մասին :

— Հոխիսիմէի մօտն է , պատասխանեց նա :

— Հոխիսիմէ , հարցրեց Սիմոնը — Ի՞նչ կին է այդ :

— Մեզ դրացի է , Սառաֆովի կինը :

— Հա՛ . . . այդ կինը լա՛ւ կին է :

— Ամենագիտուն , խելօք եւ աղնիկ , բայց ինչո՞ւ ես հարցնում , Սիմոն :

—Այ կնիկ, ի՞նչ ես հետաքրքրվում, Խնձ Երեմի, Խալիս Բալիս:

—Ի՛հ, ասաց Օլինկան — դու էլ խո, քո ուսերդն խօսքերովը:

—Ա՛յ կնիկ, բոլոր սրտովը սկսեց ծիծաղել Սիմոնը — ուղու՞մ եմ ասել որ կամաց որ երթաս չա՛տ կ'երթաս, համբերիր կ'իմանա՛ս...

—Ի՞նչ կայ ուրեմն, մի բան կայ նոր:

—Է՛սի հա՛ (1) գոչեց Սիմոնը — ա՛յ կնիկ, փոքր ինչ համբերիր է՛լի:

—Լա՛ւ, լաւ, մի՛ բարկանալ...

—Օղորմի բու հօրը, այժմ գնա էտ չը-ռիսոմի մօտ...

—Հռիփսիմէ:

—Ռոմսիմէ, փռոմսիմէ է, ի՞նչ «զախ-րումար» է, գնա ասա որ դայ մէկ քիչ խօսինք, «ըխտըլաթ» (2) անենք:

—Վա՛... գոչեց զարմացած Օլինկան — ի՞նչ գործ ունիս այդ կնկան հետ:

—Է՛սի հա՛... գոչեց անհամբերութեամբ Սիմոնը, — քեզ ասում եմ դնա կանչիր, դու էլ սուս ու փուս գնա ու կանչիր, ի հարկէ մի գործ կ'ունենամ:

Օլինկան գլուխը ծռեց եւ սենեակից դուրս գնաց, իսկ Սիմոնը փռուեցաւ մահճակալի վրայ, մի աղատ շունչ առաւ լիքը բերնով եւ ասաց.

—Օ՛հ... հաղիւ մէկ ուրախ օր տեսայ տանս մէջ... ի հարկէ ուրախ կը լինիմ, ո՞ր յիմարը չի ուրախանալ, երբ մէկ հարուածով 5000 մանէթ է չափում եւ մի ահագին բնկերութեան կէս տէրը լինում... քէֆ արա, Սիմոն, տաս տարւայ երազածդ միտքը իրագործվում է...

Պատշգամից քայլերի ձայն լսելով Սիմոնը նստեց, շտկեց իրեն եւ սպասեց. Տիկին Հռիփսիմէն ներս մտաւ, ամենայն համեստութեամբ բարեւեց եւ նստեց. Վարդուհին էլ նորա հետն էր:

—Բարի եկաք, քոյրի՛կ, ասաց Սիմոնը — այս ի՞նչ է, դրացի էք, ես չեմ իմացել, ինչո՞ւ ուրեմն չէք գալիս — գնում:

—Ես գալիս եմ, ասաց տիկինը նազանքով — միայն դուք տանը չէք լինում:

—Հա՛, ճշմարիտ է, ի՞նչ արած, քոյրի՛կ, գործը չի ներում, բնտանիք ունինք, պէտք

է աշխատինք, որ ապրինք եւ ապրեցնենք:

—Իրաւունք ունիք, այժմ շատ բարեբախտ եմ որ այսօր ձեզ կարողացայ տեսնել:

—Ա՛յ կնիկ, չայ տուր, հրամայեց Սիմոնը իւր կնոջ:

—Հ՛ը, Վարդուհի, դարձաւ նա ժպտելով աղջկան — լաւ հարեւան ես գտել ա՛յ... ուրախ եմ որ քոյրիկի նման մի լաւ կնոջ ես հանդիպել:

—Շնորհակալ եմ, ասաց Հռիփսիմէն կոտրտուելով — Վարդուհին շատ լաւ աղջիկ է, ամէն նորա տեսնողը խելոյն կը սիրէ նորան:

—Հը, չե՞ս ուռում... ծիծաղեց Սիմոնը Վարդուհուհոյն ուղղելով իւր խօսքը:

Վարդուհին կարտրեց:

—Շնորհքով աղջիկ է, շարունակեց Հը-ռիփսիմէն — լաւ է սովորում...

—Վարդուհի՛, միջահատելով Հռիփսիմէի խօսքը՝ դարձաւ Սիմոնը աղջկան, ուրիշ աղջիկ հարեւան էլ չունի՞ս:

Բոլորը նորա երեսին նայեցին զարմացած այդ անյարմար հարցի համար:

—Ունիմ, կայ, ասաց Վարդուհին:

—Գնա՛ նոցա հետ խօսիր, զաւակս, ասաց Սիմոնը լուրջ դէմքով եւ գգուելի ձայնով — ես քոյրիկի հետ մի քիչ խօսելիք ունիմ:

Վարդուհին դուրս գնաց, մինչդեռ Օլինկան եւ Հռիփսիմէն զարմացած էին:

—Քոյրի՛կ, ասաց Սիմոնը Հռիփսիմէին, երբ աղջկայ ոտի ձայները անլսելի եղան — իմ Վարդուհին արդէն 18 տարեկան է, մի հասած աղջիկ, ուսումն էլ առել է, ի՞նչ կ'ասես, ես ուղում եմ նորան սպակել, լաւ չէ՞...

Հռիփսիմէն սլահ մի մտածեց, նորա սիրտը սկսեց ուրախութիւնից բարախել:

—Ինչո՞ւ չէ, Սիմոն Գասպարիչ, ասաց նա — Վարդուհին ամուսնացնելու ժամանակ է:

—Շատ ապրիս, դիտեց Սիմոնը — այ կնիկ, դո՞ւ ինչ կ'ասես:

—Դու գիտես, ասաց խեղճ կինը:

—Դու էլ շատ ապրիս, այժմ՝ յայտնեմ ձեզ... բայց, սպասէ՛ք, քոյրի՛կ, դարձաւ նա Հռիփսիմէին — դու մեզինից լաւ ծանօթ ես Վարդուհիին, անշուշտ նա բեզինից ծա-

(1) Գաթճեալ: (2) Խօսակցութիւն:

քեր. նոցա վերը գտնվում է հրդեհի համար պատրաստուած ջրհան մեքենաների ամբարը, իսկ վարումը փոփոխվում է Գօլօվինսկի Պրասպեկտը:

Նիկոլան ցած իջնել սկսեց Փոխարքայի պալատի կողմից, բայց հապիւ թէ հասել էր գնտակախաղի տեղին, նորէն կանգ առաւ, գլուխը թափահարեց մի այնպիսի ձեւով, որ ուղղում էր ըսել.

— Ինչ որ լինելու է լինի, դնամ:

Եւ նորէն յետ դարձաւ:

Դժուարութիւնը նորանումն էր, որ Վարդուհեոյն տեսնել կարելի էր տիկին Հռիփսիմէի մօտ, իսկ Նիկոլը գիտէր որ Հռիփսիմէն սիրում է իրեն եւ հետեւապէս անկարող էր նորա մօտ մի քաղցր խօսք անգամ ուղղել օրիորդին. այսպէս գնալ կամ չը գնալը մի եւ նոյն հաշիւ էր, այսու ամենայնիւ Նիկոլը, որը բաւականի յանդուգն էր, չէր մտածում միջոցների վրայ, այլ թոյլ էր տալիս որ հանգամանքները միջոց տրտադրեն:

Բայց արագութեամբ, հասաւ տան առաջ, ուղեց ոտը ներս դնել, բայց այդ միջոցին ետեւիցը լսեց ոտնաձայներ, դարձաւ, եւ տան փոքրիկ դռնից տեսաւ, որ ներս են մտնում տիկին Հռիփսիմէն եւ Վարդուհեոյն. Նիկոլան դողաց եւ ծածկուեցաւ դրան ետեւը:

— Յոգնեցի՞ր, հարցնում էր Հռիփսիմէն Վարդուհեոյն:

— Այո՛, տիկին, ճանապարհը չաւ երկար էր:

— Հոգ չէ, հասանք, . . . եւ նոքա մօտեցան աստիճաններին:

Նիկոլան ուղեց վազել, կամ ցոյց տալ որ ինքը ներկայ է, բայց պարագայն լաւ չէր եւ հետեւապէս «ուհի» ները ներս մտան:

Նիկոլան մնաց չուարած. ի՞նչ անէր, ի՞նչպէս մտնէր, կամ ի՞նչ պատճառ բռնէր իւր այցելութեան առաջին իսկ անգամ տիկին Հռիփսիմէի մօտ:

— Սասանա՛ն տանէ, միմեաց նա — ի՞նչպէս մինչեւ այժմ չեմ աշխատել մօտ գործել այս տան մէջ . . .

— Հոգ չէ՛, աւելացրեց նա մի բոլորով մտածելուց յետոյ — այս երեկոյ չեղաւ, վաղը ի հարկէ մի միջոց կը գտնեմ . . .

Եւ նա դուրս եկաւ բակից եւ Գօլօվինսկի Պրասպեկտ իջաւ:

— Այս ի՞նչ է . . . միմեաց նա նորէն, կրկնի մօտ կանգ առնելով — սիրտս սաստիկ բարախում է . . . զրգուած եմ . . . ստատանան ասում է ուղղակի դնա, մտի՛ր, բռնիր համբուրիր Վարդուհիին ինչ որ կ'ուզէ լինի եւ կամ . . . նոյն իսկ Հռիփսիմէին . . . եթէ Վարդուհին այն տեղ չը լինի:

Նա մի քանի քայլ առաւ դէպի կեղրոնական Գրաւաճառանոցը:

— Ի՛հ, խօսեց ինքն իրեն — դնամ Լիզաի մօտ . . . այդ էլ մի բան է . . . հը՛մ, բայց եթէ նա արդէն ուրիշ մէկին գտել է . . . այնու ամենայնիւ, տեսնենք, Լիզան չը լինի, Ստիլան կայ, նա էլ չը լինի, Վառվառան կայ, ի՛նչ որ է, այս գիշեր ուղղում եմ համբուրել . . . ուղղում եմ . . .

Նա իջաւ դէպի Աղէքսանդրեան այգին, անցաւ նորա միջից, ծռուեցաւ մոտաւ Օրբէլեան փողոցը, իջաւ դէպի «Մեղու» խմբագրատունը, յետոյ քերեց հեռագրատան կողքը եւ կանգ առաւ փողոցի մէջտեղ:

Մի քանի քայլ հեռու, մի դրան առջեւ ժողովուած 3-6 օրիորդներ բարձրածայն խօսում եւ ծիծաղում էին, մէկը երգում էր, իսկ ամէն դրան առջեւ այդպէս էր. բայց դոցանից լաւերը տեսնելու համար Տիգրիս դնացող ընթերցողներին խորհուրդ կը տայինք ժամը 8 ին բարձրանալ Հաւլաբար, կամ մտնել Ոստիկանական փողոցը եւ կամ անցնիլ «Վանքի մեծ փողոց» ից:

Նիկոլը փոքր ինչ կանգ առաւ, յետոյ մօտեցաւ դրան եւ դռաց.

— Բարեւ, օրիորդներ . . .

— Ա՛հ . . . ճիշտ արձակեցին զգայուն ջիզերով օրիորդները — այս ո՞վ է:

— Այդ իմ աղնուութիւնն է, ասաց Նիկոլը եւ գլխարկը հանեց:

— Ա՛, ա՛, գոչեցին բոլորը — պարոն Նիկոլն է, ի՞նչպէս էք:

— Առողջ, զուարթ եւ ուրախ:

— Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեցին «ուհի» ները, ի՞նչ պերճախօս է:

— Ձեր սիրուն դէմքերն են ինձ պերճախօսութիւն ազդում:

— Ծողոքո՞րթ . . . բացառաւնչեց մէկը:

— Ա՛, ա՛, այդ դո՞ւք էք, օրիորդ Ստիլայ:

—Այո՛, պարո՛ն չողորորթ :

—Թող կը տա՞ք ուրեմն փոքր ինչ չողորորթել ձեզ :

—Նողորորթի՛ր, չողորորթի՛ր, գոչեցին օրիորդները ծիծաղելով եւ ցատկւտելով :

—Դուք, օրիորդ Սոփիայ, ասաց Նիկօլը հապտութեամբ — շատ սիրուն էք, փոքրիկ համբուրելու չրթունքներ ունիք . . .

—Ձայնդ, անա՛մօթ . . . գոչեց Սոփիան ժպիտով, բայց չառաջնել էր ուրախութիւնից, որ Նիկօլն իրեն բոլորից գերադասեց :

—Շարունակե՛մ . . . հարցրեց երիտասարդը :

—Շարունակիր, բայց մեզ էլ չողորորթի՛ր :

—Բոլորդ էլ համբուրելու չրթունքներ ունիք, բայց օրիորդ Սոփիան աւելի սքանչելի այտեր, աչքեր, ճակատ՝ եւ վիզ ունի . . . ա՛յ, կ'ուզէք մի բանաստեղծութիւն իսկ կ'ասեմ . . . օրինակ .

Տեսա՞ր վարդը ի մէջ թփի
Որ քան զամէն կը փայլի,
Տեսա՞ր նորա տերեւք կարմիր
Որոց խաղցնէ անոյշ զեփիր . . .

Նա այդ երգելով մօտեցել էր Սոփիային, մեղմութեամբ թեւն անց էր կացրել նորա մէջքովը, իսկ Սոփիան չէր աշխատում անգամ դիմադրել :

Այդ դու ես,
Կարմիր վարդ ես,
Սերելին
Սոխակին :

Եւ նա այս ասելով կռացաւ եւ իւր շքրթերովը դգուեց նորա այտը . . .

Վարդուհին մոռացուած էր :

ԺԲ.

Է Լ Դ Օ Ր Ա Դ Օ

Արծրունեայ եւ Փիտօէվի քաղաքային թատրոնները թանգ էին . նոքա մի գիշերուայ համար 50 մանէթից պակաս չէին վերցնում, ուստի ամէն մի դերասան չէր կարող ներկայացում տալ այնտեղ . բացի դորանից հռչակաւոր դերասան Ադամեանի եւ իւր խումբի ցրուելուց յետոյ, ժողովուրդը այլ եւս չէր յաճախում հայկական թատ-

րոն, չը կորցնելու համար այն լաւ տալաւորութիւնները, որոնք թողել էին Ադամեանը, Մնակեանը, օր. Գարագաշեանները եւ միւս ընտիր դերասանները, եւ իրաւունք ունէին, որովհետեւ ամէն մի փոքր ինչ հայերէն գիտցող երիտասարդը բեմ էր դուրս գալիս, արձանի նման ցցվում էր նորա վրայ, թուլթակի նման կրկնում իւր սոփորած դերը եւ դուրս գնում :

Մինչեւ այժմ էլ Տփլիսի բեմերի վրայ կարելի է տեսնել Վրոյրի, տիկին Զապէի, եւ այլ դերասանների ստուերներին, որոնք միացնելով իրենց հետ մի քանի առաջին անգամ բեմ դուրս եկողներին — ներկայացում են տալիս, երբեմն վնասվում են, երբեմն օգտվում եւ ծիծաղում ժողովրդեան վրայ :

Բայց որովհետեւ շատ անգամ հասոյթը այնքան շատ չէ լինում, որ թատրոնի վարձը վճարելուց յետոյ, մի փոքր դուռնոր եւս մնայ, ուստի Նիկոլայէվսկի փողոցից ցած, հանրածանօթ «Սէմէյնի, Եւրոպա եւ Էլ-դօրադօ» այգիներում գտնվում են բեմեր, որոնց վրայ խաղում են ձեռնածուներ և :

«Եւրոպա» այգիում Տէր Գաւթեանց անունով մի դերասան ամէն երեկոյ խաղում էր իւր անբաժանելի ռուսուհիներին հետ «Նոր-Բնակտրան», եւ տալիս էր պարահանդէսներ, որոնց պարողները նա վարձում էր «Միչէլովսկի» անառականոցից, հետեւապէս ազատ մնում էր միայն «Էլդօրադօ» ի բէմը եւ մի գեղեցիկ երեկոյ այդ բեմը վարձուեցաւ հայ դերասանական խումբից, գիշերը 15 մանէթով լուսաւորութեամբ հանդերձ :

Այդ իրիկուն, այն օրուայ հետեւեալն էր, ուր Նիկօլին մենք Սոփիայի հետ թողինք :

Այդ օրը, իրիկնապահին, «Էլդօրադօ» ի թատրոնի սրահը մտաւ մի կարճահասակ 40 ամեայ մարդ երերուելով, քրտնաթոր ճակատը սրբեց եւ իւր չորս կողմը մի արագ հայեացք ձգելով .

—Վա՛, դեռ ոչ ոք չի եկել, ասաց նա եւ դրպանից հանեց մի հատ մէկ կողմէնոց դանիկ, վառեց, կանգնեց սրահի չէմքի վրայ եւ ակնարկը ուղղեց դէպի այգիի դուռը, որը գտնվում էր հեռու, դիմացը, իսկ այնտեղից մինչեւ իրեն ձգուած էր մի սիրուն ծառուղի, որոյ երկու կողմից կռա-

նալով խաղողի որթեր եւ ծառերի ճիւղեր, ամբողջ ուղիի վրայ ամպհովանի էին կազմել: Սրահի առջեւումը փոփում էր մի հըրապարակ, որոյ մէջ տեղ տեղ դրուած էին սեղաններ, չըջապատուած մի քանի աթոռներով: արեւը այդտեղ զարնում էր ուղղակի եւ մեր պարոնը փոքր ինչ կանգնեւոյց յետոյ, մտաւ ծառուղին եւ նստեց մի խնձորենույ տակը:

— Ուշանում են . . . մոմուայ նա — վաղը ներկայացում ունինք, իսկ դեռ եւս բեմի վրայ մի անգամ էլ փորձ չ'արինք: Ա՛յ . . . դռնէց նա այգիի դրանը նայելով — ահա «խենթ»-ը դալիս է:

Մօտենում էր մի նիհար երկարահասակ երիտասարդ գորշ ուսական մազերով եւ կապոյտ, աւելի ոչխարի քան մարդու աչքերով: Նա մի թեւի տակը ունէր թղթի ծրար, միւսի տակը հովանոց, մի ձեռքով գլխարկն էր բռնել, իսկ միւսովը մի մետաքսեայ թաշկինակ հանելով գրպանից սկսեց քրտինքը սրբել եւ միանգամայն արագ քայլերով մօտենալ:

— Պ. Գէորգ . . . դռնէց նա հեռուից — չո՛ւտ էք եկել . . . հի՛, հի՛, հի՛, տեսնո՞ւմ էք, ես ամէնից առաջ հասայ:

— Ախր դու քաջ ես, Բագրատ, ժպտեց խորամանկութեամբ Գէորգը — ի՞նչ լուր ունիս, տոմսակ ծախեցիր:

— Ի՞նչպէս չէ, ի՞նչպէս չէ, այսօր 20 ի չափ տոմսակներ տուեցի:

— Այ, շատ ապրիս, դիտեց զուարթութեամբ Գէորգը — բոլորը առի՞ն:

— Ասեմ, վրայ տուաւ Բագրատը արագութեամբ — Թախրովը մի 5 բուրլիանոց առաւ, նա միշտ առնում է, Գենեբալ տէր Ասատուրովն էլ առաւ, բժիշկ Նաւասարդեանն էլ . . .

— Իսկ Թամաիէվին տարա՞ր:

— Տարայ, նախ առնել չ'ուզեց, իսկ երբ ասացի որ Աշըղ Զիւանին իւր խմբի հետ կ'երգէ — առաւ, բոլորն էլ առին:

— Ի՞նչ լաւ արինք, որ Աշըղ Զիւանին հրաւիրեցինք, դիտեց Գէորգը — այդ ժողովրդական բանաստեղծին ամէն ոք սիրում է:

— Գիտե՞ս ի՞նչ կայ, Գէորգ, հա՛, բայց դո՛ւ ինչ արիր:

— Բեհզեդեբուղի հաղ ուստը պատրաստ է,

իսկ սատանաներինը վաղը կէս օրին կը վերջանայ:

— Հասա դագա՞ղը:

— Ի՛հ, դագաղը հեշտ է, դու այն ասա՛, թէ ի՞նչ էիր ուղում ասել:

— Ուղում էի ասել թէ լեցի որ Գ. Սունդուկեանցը կամը չէ յայտնել, որ իւր «Օսկան Պետրովիչ»-ը խաղանք այստեղի բեմի վրայ:

— Վա՛, ճի՛շդ եւ ինչո՞ւ համար:

— Իբր թէ բեմը փոքր է, դժոխքի համար «դէկոր» չ'ունինք:

— Հը՛մ, ժպտեց Գէորգը — վաղը թող դայ տեսնէ, թէ ի՞նչ գեղեցիկ դժոխք եմ չ'իտելու:

— Էլ չը դիտեմ, կարծեմ Սունդուկեանցը աստիկ բարկացել է:

— Փոյթս չէ, մենք մեր գործին նայինք . . . բայց ո՞ւր են այս դերասանները:

— Կը դան, ասաց Բագրատը այգիի դրանը նայելով — հա՛, ահա տիկին Հսիկան զպրիս է, միւս երիտասարդը ո՛վ է, որ նորա հետ դալիս է:

Գէորգը կուացաւ եւ նայեց:

— Չը գիտեմ, բայց հագուստը Կլասիքական Գիմնազիոնի աշակերտի է:

— Նրեւի, հը՛մ, ժպտեց խորհրդաւորապէս Բագրատը Գէորգին նայելով — երեւի . . .

— Ա՛յ սատանայ, ժպտեց նոյնպէս Գէորգը — ուղում ես ասել որ սիրո՞ղն է:

— Ո՞վ գիտէ, ես այդ չ'ասացի:

— Ի՞նչ հոգ, տիկին Հսիկան զսիրտիմէն ինչ որ ուղում է այն է անում:

Տիկինը եւ երիտասարդը մօտեցան եւ տիկինը հեռուից դուռաց:

— Դեռ ոչ ոք չէ՞ եկել, Պ. Գէորգ:

— Ո՛չ, տիկին, համեցէք փոքր ինչ նըստէք, կը դան:

Տիկինը առանց խօսելու մօտեցաւ եւ ասաց Գէորգին եւ Բագրատին:

— Ծանօթացէք Նիկօլա Խաչատրեանցի հետ:

Երիտասարդները միմեանց ձեռք թոթուեցին:

— Նստէ՞ք, աւելացրեց Բագրատը:

— Գնանք, Նիկօլ, քիչ պտտենք, ասաց տիկինը Նիկօլին դառնալով, որը լուրջութեամբ հետեւեց նորան, իսկ Բագրատը եւ Գէ-

որդը մի խորհրդաւոր ակնարկ փոխանա-
կեցին :

Տիկիներ եւ Նիկօլը մտան ծառուղիների
մէջ :

— Մէկը դոցանից Սարգսեանն է , ասաց
տիկիներ Նիկօլին — հռչակաւոր լուրջ կա-
տակարան է , իսկ միւսը . . .

— Ո՞րը . . . միջնատեց երկտասարդը :

— Սարգսեանը կարճահասակն է , իսկ
միւսը մի սնտոխապաշտ տխմարի մէկն է , նո-
րան կոչում են « գրաւաճառանոցի խենթ » ,
որովհետեւ նա կեդրոնական գրաւաճառա-
նոցումը ծառայել է , երբէք դերասանու-
թեան չնորհք չ'ունի , բայց ընտիր տոմսակ
ծախող է եւ գործունեայ տղայ :

— Գործա թողնենք , տիկին , ասաց Նի-
կօլը — մեր դործին դառնանք :

— Քայլենք այս կողմից , դիտեց տիկիներ
եւ նորա մտան մի ուրիշ ամայի ծառուղուց
մէջ — ի՞նչ էլի ասում , յարեց նա , երբ
մտել էին մի թափուր կողմ :

Նիկօլը մեղմութեամբ բռնեց տիկինը
ձեռքը , որը թոյլ տուաւ , եւ ուղղակի նո-
րա աչքերի մէջ նայելով , ասաց դողդոջուն
ձայնով .

— Ես ասում էի , Հռիփսիմէ , եթէ չեմ
սխալվում , դու ինձ սիրում ես . . . :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՑ

(Շարունակելէ)

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՐԱՆԴ ԶՕՐԱՊԵՏԻՆ ԹԱՂԱԻՄԸ

Նիւ - Երբ , 45 Օգոստ .

Հանգուցեալ զօրապետին մարմինը
զմասեալ մնաց Մաք Կրէկօր լեռը մինչեւ
օգոստոսի չորրորդ օրն , եւ այս միջոցին
կատարուեցան հարկաւոր պատրաստու-
թիւնը փոխադրութեան եւ յուղարկաւորու-
թեան մեծ հանդիսին համար : Յուղարկա-
ւորութեան օրն սրճափ կը մօտենար նոյն-
չափ կ'աւելնային սգոյ ցոյցեր , ցառակցու-
թեան անկեղծ յայտարարութիւններ եւ
մեծանուն ննջեցելոյն յիշատակին յարգա-
նաց նշաններ : Նախագահէն սկսեալ մինչեւ
աղքատ դործաւորն , որ առժանեղի աշխա-

տութեամբ հաղիւ կը ճարէ իւր օրապահի-
կը , իրենց խորհրդոյ առարկայ ըրած կը
թուէին Կրանդ զօրապետն եւ անոր յի-
շատակին մատուցանելի յարգանքը :

Յուղարկաւորութեան ժամանակացոյցը
պատրաստուեցաւ քանի մ'օր առաջ հան-
դերձ մանրամասնութեամբ : Հաղարաւոր
թերթեր հրատարակեցին ոչ ժամանակա-
ցոյցը միայն , այլեւ ամենէն փոքր բաները
որ կը վերաբերէին զօրապետին մարմնոյն
Մաք Կրէկօր լեռնէն ի Նիւ - Երբը փոխադ-
րուելուն եւ Նիւ - Երբի մէջ կատարուելի
մեծ հանդիսին : Ըստ ժամանակացոյցին ,
օգոստոսի չորրորդ օրը , ժամը մէկին , յետ
միջօրէի , ննջեցեալը Մաք Կրէկօր լեռնէն
պիտի վերցուէր յատուկ կառաչուով , որ
ժամը երկուքին պիտի հասնէր ի Սարադօ-
կա եւ աստի մեկնելով ժամն երկուք ու կէ-
սին պիտի հասնէր Է Կլին յԱլպանի , կեդրոն
Նիւ - Երբ նահանգին կառավարութեան Ալ-
պանիի մէջ , ննջեցեալը պիտի մնար կառավա-
րութեան ապարանքին մէջ ի Կապիտոլ , ի տես
ժողովրդեան մինչեւ հետեւեալ աւուր կէսն ,
եւ անտի զինուորական հանդիսիւ ճամբայ
պիտի դրուէր դէպ ի Նիւ - Երբ , ուր պիտի
հասնէր յուղարկաւորութեան կառաչուն
յետ միջօրէի ժամը Ծի առեւնները : Հան-
գուցեալ զօրապետին մարմինը Նիւ - Երբի
Մեծ Կեդրոնական կայարան կոչուած կա-
յարանէն մեծ թափորով պիտի տարուէր
քաղաքապետութեան ապարանքը ուր պիտի
դրուէր հանդիսիւ ի տես ժողովրդեան մին-
չեւ ուրբաթէն չարաթ լուսանայու դիշեր-
ուան ժամը մէկ : Այս ժամանակացոյցը
պահուեցաւ զինուորական ճշդութեամբ
գրեթէ կէտ առ կէտ :

Օգոստ . Էին ի ծագել արեւու թնդա-
նօթք սկսան դուալ Մաք Կրէկօր լեռան
վրայ , եւ զինուորականք ընել անսովոր
չարժումներ եւ պատրաստութիւններ : Կը
մօտենար ժամն երբ Մաք Կրէկօր լեռնէն
անշունչ դիակ պիտի վերցուէր Նիւ - Երբ
տարուելու դիւցազնը , որոյ կենաց վրայ կը
դուրդուրար ազգն ողջոյն , եւ որոյ առաջին
անգամ այն լեռը հասնելը տարբեր յուղ-
մունք պատճառներ էր եւ պահ մը յուսոյ
դուներ բացած էր : Հարկ չէ ըսել թէ մահն
իւր սեւ քօղը սիրած էր բոլոր լեռան վրայ
եւ նախընթաց դիշերն կարծես թէ երկինք

ևս սգակիրց եղած էին այս մեծ ազգին արտասուելով: Գիշերը տեղացած էր յորդանմբեւ, որ եւ հովիտներն ողորած եւ ճամբաները թրջած լուացած էր: Սակայն առաւօտն էր պարզ եւ զով: Ժամն առաւօտեան իննուկէսին կառաջուն բերաւ Հանգօգ եւ Շէրման զորապետներն եւ զինուորական ու քաղաքական ուրիշ բարձրաստիճան պաշտօնատարներ եւ նշանաւոր քաղաքացիներ: Ջինուորական խումբեր բարեւեցին նորեկ հիւրերն, եւ ապա շարուեցան դալարեաց վրայ եւ ոստախիտ ծառոց ներքեւ հանդէպ սպարանքին ուր էր մեծ զորապետին մարմինը: Հանգստեան հոգեւոր պաշտօնը պիտի կատարուէր ամբարանոցին մէջ ի ներկայութեան ննջեցելոյն ընտանեաց, բարեկամաց եւ բարձր պաշտօնատարաց: Այս պաշտօնը սկսաւ կատարուիլ ժամը 10ին, այն սենեկին առջեւ ուր դրուած էր դադաղն, եւ որոյ բաց դռնէն կը բուրէր ծաղկանց անուշ հոտ: Այս պաշտօնը բաց ի զինուորական երեւութէն ուրիշ շատ նշանաւոր բան չունէր: Երէց մը կարդաց ժԹ. Սաղմոսն, եւ այս Սաղմոսին ընթերցումն կ'ընդմիջէր թնդանօթի գոռումներով: Ուրիշ երէց մ'աղօթեց, եւ նշանաւոր երգչաց պար մը երգեց հոգեւոր երգեր: Դամբանական քարոզը խօսեցաւ Տոգ. Նիւման, որ հանգուցեալ զորապետին մտերիմ բարեկամներէն էր, եւ անոր հիւանդութեան ատեն գրեթէ բաժնուած չէր անկէ: Տոգ. Նիւմանի դամբանականը տեւեց աւելի քան մէկ ժամ: Յետ աւարտման հոգեւոր պաշտօնին զինուորական նուագածուք սկսան նուագել ողբաձայն եղանակաւ մեռելոց քայլերդ, եւ թափորը կը կազմուէր տակաւ: Ճամբուն երկու կողմը բաց ի զինուորներէ շարուած էին բազմաթիւ այր եւ կին մարդիկ հանդերձ տղայովք եւ աղջկօք որ Սարադօկայէն եւ այլ տեղերէ եկած էին հրաժեշտի ողջոյն տալու մեծանուն զորապետին մնացորդաց եւ տեսնելու յուղարկաւորութեան առաջին թափորը:

Երկաթուղին խնամով քննուած էր, ճամբուն վրայ հարկաւոր նորոգութիւններ եւ կարգադրութիւններ եղած էին զի մի գուցէ արկած պատահէր: Կառաջուն, ինչպէս ըսուեցաւ, էր յատկապէս պատրաս-

տուած: Այն կառքն որու մէջ պիտի դըրուէր ննջեցեալն ծածկուած էր ազգային դրօշներով եւ դրասանգներով: Կառքին երկու կողմերը բաց էին, որպէս զի ճամբուն երկու կողմէն մարդիկ կարենային տեսնել դադաղը: Միւս կառքերը ծայրէ ի ծայր ծածկուած էին ընտիր տեսակէ սեւ կերպասով, որոց վրայ ննջեցելոյն անուան սկզբնատառերը միայն կ'երեւէին բաց ոսկեզօծ գիրերով: Դադաղն էր արծաթապատ, գեղեցիկ ծիրանեաւ ծածկուած եւ ծիրանեայն վրայ արծաթեայ աստղեր սըլուռուած: Դադաղին քովերու ձողերն եւ բռներու տեղերն էին համակ արծաթէ: Ժամը մէկին բառորդ մնացած էր երբ դադաղն ամարանոցէն դուրս հանուեցաւ երկաթուղւոյ կայարանը տարուելու: Ջինուորք յամրաքայլ կ'ընթանային առջեւէն եւ քովերէն, եւ հանգուցեալ զորապետին որդիք եւ բարեկամք կ'երթային դադաղին ետեւէն: Ճամբուն երկու կողմը շարուած արք իրենց գլուխները բացած էին ի նշան յարգանաց, եւ կիներէն ոմանք կ'արտասուէին: Կառաջուն երբ մօտեցաւ Սարադօկայի, թնդանօթք սկսան գոռալ, մարդկային հեղեղ մը սկսաւ հոսել փողոցներէ: Ամէն կողմ, տանիքներ, պատուհաններ, սանդուղներ եւ փողոցի կառքեր արանց եւ կանանց բազմութեամբ ծածկուած էին: Շուրջանակի կը տեսնուէին սգոյ բազմատեսակ նշաններ, տանց ձակատներ եւ մեծ սիւներ սեւով պատած, ազգային դրօշներ եւ հանգուցեալ զորապետին պատկերները սեւ շղարչներու մէջ առնուած: Ճամբուն երկու կողմը մարդիկ շարուած էին մինչեւ յԱլլանի: Երբ կառաջուն մօտեցաւ յԱլլանի, այն քաղաքին թնդանօթք սկսան գոռալ: Եկեղեցեաց զանգակներն տխուր կը հնչէին քանի մը վայրկեան դադարով: Քաղաքը դղրդած էր, զինուորական փողի ձայներ կը լսուէին ամէն վայրկեան, ոստիկանք մեծ դժուարութեամբ կրնային բաց պահել ընդարձակ փողոցներն ուստի պիտի անձնէր թափորը: Անհնար է նկարագրել արանց եւ կանանց ճիգն աղէկ տեղեր դըտնելու թափորը տեսնելու համար: Փոքր տղայք կապի եւ հեռագրաց ձողերու գլուխները դարած էին թռչնոց նման, տանիքներ եւ պատուհաններ սեւցած էին: Նա-

հանդիման քաղաքական եւ գինեւորական իշխանութիւնը, կառավարական բոլոր մարմինը, այլ եւ այլ ժողովներ բազմաթիւ ընկերութեանց կողմէն պատգամաւորութիւններ եւ հազարաւոր ժողովուրդ երկաթուղւոյ կայարանը գացին ընդունելու զօրապետին մարմինը, եւ տխուր բայց փառաւոր հանդիսիւ բերին ի Կապիտոլ յատուկ կառքով որուն լծուած էին վեց ձիեր: Նախ պաշտօնատարը կառավարութեան դիտեցին զօրապետին դէմքն, եւ յետոյ ժողովուրդը սկսաւ կարգով անցնիլ դադաղին քովէն: Մարդկային հեղեղ մ'էր որ կը հոսէր ի Կապիտոլ: Ժամը միջին հաշուով 6,000 - 8,000 մարդիկ անցան դադաղին քովէն, որոյ ապակեղէն կախարիչներուն ներքեւէն կ'երեւէր մարմինն ամբողջ պարզ քաղաքացւոյ զգեստով: Հանրապետութեան մեծ բանակին վաղեմի գինեւորներէն երեքտասան հոգիք, վեցը մէկ կողմ՝ վեցը միւս կողմ եւ մին գլխուն վերեւ կեցած, պահպանութիւն կ'ընէին, եւ այս պահպանք կը փոխուէին ամէն երեք ժամն անգամ մը: Զօրապետին մարմինը տեսնելու փափաքով դէպ ի Կապիտոլ դիմող մեծ բազմութիւնը կը բազկանար ամէն աստիճանէ, ամէն կարգէ եւ ամէն սեռէ մարդերէ: Կանայք արանց չափ բազմաթիւ էին, եւ անոնցմէ ոմանք իրենց գլխիդ կամ իրենց հետ ունէին մանկիկներ որոց կը ցուցունէին մեծ զօրապետին դէմքը: Ալպանի քաղաքը չ'ընացաւ այն գիշեր. ճաշարաններն եւ գինեւորանները բաց մընացին մինչեւ առաւօտ: Գերմանացի ութնուազերգական ընկերութիւնը եւ ուրիշ նուազածուաց խումբեր՝ աւելի քան 500 ձայնէ բազկացեալ՝ սպարազային համար պատրաստուած տխուր եղանակ մը նուագեցին Կապիտոլի շուրջը հասարակաց սարտիզին մէջ: Կապիտոլ լուսաւորուած էր ելեկտրական լուսով:

Առաւօտուն թնդանօթը սկսան դարձեալ գոռալ, եւ ժողովուրդը դեռ կը շարունակէր կարգաւ երթալ ի Կապիտոլ: Գործաւորք մէկ ձեռքով իրենց գլխարկները, միւս ձեռքով ցերեկուան կերակուրները բռնած դադաղին քովէն կ'անցնէին: Անոնք որ չ'ընկալ տեղերէ եկած էին՝ հիւր ըլլալու տեղ չ'ընտելով, եկեղեցեաց բակերը, մեծ շէնքերու դռները, սրահներու տակ եւ

սանդուղներու վրայ խռնած էին:

Նահանգին Մերակուտի եւ Երեսփոխանաց ժողովները դումարեցան առաւօտուն, եւ երկար գովեստներով եւ երախտագիտական խօսքերով խորին ցաւոյ զգացումներ յայտնեցին զօրապետին մահուան համար, եւ որոշեցին ամբողջովին ներկայ դրանուիլ յուղարկաւորութեան հանդիսին ի Նիւ-Եորք. նա եւ յանձնաժողովներ կարգեցին զօրապետին մարմնոյն ընկերանալու Ալպանիէն ի Նիւ-Եորք:

Զօրապետին մարմինը մինչ կը կենար Կապիտոլի մէջ, Ալպանիի Կրանդ Գլիւս կոչուած Գլիւսպին անդամը դափնեայ չքեղ պըսակ մը բերին դրին անոր դադաղին վրայ:

Ապադային տապանադիր մը պիտի դըրուի Կապիտոլի մէջ այն տեղն ուր օր մը հանգչեցաւ Կրանդ զօրապետին մարմինը: Հաշիւ կ'ըլլայ որ Ալպանիի մէջ 65 - 75,000 մարդիկ կարգով եկած անցած են դադաղին քովէն:

Օգոստոս 5ին, ժամն ըստ Ներուպացոց 12 1/2ին յուղարկաւորութիւնն սկսաւ յԱլպանի, եւ գինեւորական թափօրն ընթացաւ դէպ երկաթուղւոյ կայարանը: Ճամբուն երկու կողմը բոլոր շէնքերը սգոյ նշաններով ծածկուած էին, եւ տանց պատուհաններն հանդիսատեսաց գլուխներով սեւցած: Կառաչուն որ յոսար կառքէ կը բաղկանար, Հուտսըն գետին վրայի կամուրջէն ճամբայ ելաւ: Գետը լեցուած էր շողեհաւերով եւ ամէն տեսակ նաւակներով որ ի նշան սգոյ կայմերու կիսէն վար պարգած էին դրօշներ: Թնդանօթներ կ'որոտային միշտ, եւ գինեւորական նուագածուաց խումբը կը նուագէր ողբաձայն: Բոլոր ճամբուն վրայ անհամար բազմութիւն կը տեսնուէր: Երկրագործք իրենց գործիները թողնով շարուած էին երկաթուղւոյ երկու կողմն, եւ բաց գլխով կը սպասէին: Երբ կառաչուն հասաւ Ուէսդ Բուէնդ, ամէն աշուքները դարձան այն տեղեր, զորս կը սիրէր Կրանդ եւ որոց վրայ քիչ ատեն առաջ այնչափ յուղամաք նայած էր վերջին անգամ: Ուէսդ Բուէնդէն թնդանօթը ողջունեցին հանգուցեալ գիւցազնին մնացորդներն: Ամէն գիւղ եւ գիւղաքաղաք, ուստի անցաւ կառաչուն, գործ դադարած էր, եւ արք եւ կանայք ճամբուն երկու կողմն ելած էին տեսնելու թափօրը:

Զորեքշաբթի օր առաւօտէն սկսեալ Նիւ-
Եորքի մէջ սովորականէն աւելի շարժում
կար, եւ համազգեստաւոր մարդիկ սովոր-
ականէն շատ աւելի կը տեսնուէին: Գա-
ղաքապետական ապարանքին մէջ զօրապե-
տին մարմինն ընդունելու համար սպարա-
տութիւնը մեծ փութով յառաջ կը տար-
ուէին: Ոստիկանք եւ զինուորական պաշ-
տօնակալը անդուլ անդադար կ'երթային
կուգային հրամաններ տանելով բերելով:

Շրջակայ քաղաքներէ եւ գիւղերէ Նիւ-
Եորք եկող արանց եւ կանանց թիւն ան-
համեմատ կերպով աւելցած էր: Զորեք-
շաբթի գիշերէն մինչեւ հինգշաբթի, ինը
ժամու մէջ աւելի քան 50 հազար հոգի ե-
կած էին ձէրդի Սիդիէ եւ շրջակայներէ:
Կէս օրէն առաջ եւ ետքը բոլոր այն փո-
ղոցները, ուստի պիտի անցնէր թափօրն,
անհամար բազմութեամբ լեցուած էին: Ոս-
տիկանք դժուարութեամբ կրնային բաց
պահել ընդարձակ փողոցներու մէջտեղի
ճամբան՝ որ կառքերու եւ ձիերու համար է
միայն սովորական օրերու մէջ:

Յորդ անձրեւ մը պահ մը ցրուեց հան-
դիսատեսները, բայց քիչ մ'ետքը դարձեալ
ժողովեցան: Կէս օրէն ետքը ժամը հինգի
ատեններն Սլայանի յատուկ կառաչուն հա-
սաւ Նիւ-Եորքի Կեդրոնական կայարանը:
Կայարանին մօտերը իրօք մեզ ձգելու տեղ
բաց մնացած չէր: Հանդիսատեսներու թիւն
ստուգիւ հաշուել կարելի չէր: Մեծ քաղա-
քին քաղաքական եւ թաղապետական իշ-
խանութիւնը, ցամաքային եւ ծովային զօ-
րաց այլ եւ այլ գունդեր եւ գումարտակ-
ներ, Մեծ Բանակին զօրաց բազմութիւն խուժ-
բեր, նշանաւոր քաղաքացիներ եւ բազում
ընկերութեանց ներկայացուցիչներ դացին
գիմաւորելու: Զօրապետին մարմինը դըր-
ուեցաւ սգոյ մեծ կառքի մը մէջ որուն լոծ-
ուած էին երկուստան սեւ ձիեր ցանցա-
կերպ հիւսուած սեւ ծածկոցներով: Իւրա-
քանչիւր ձիու քովէն կ'երթար մէն մի սե-
ւամորթ սգազգեստ: Թափօրը Կեդրոնական
կայարանէն սկսեալ հետզհետէ ստուարա-
ցաւ, մեծցաւ նոր գունդերու եւ նոր մար-
միններու աւելնալով, եւ մեծ չքով սկսաւ
ընթանալ դէպ ի քաղաքապետութեան ա-
պարանքը: Զօրապետին մահուան օրէն ի
վեր քաղաքապետութեան ապարանքն ընտիր

ճաշակաւ, մեծ աշխատութեամբ եւ ծախ-
քով զարդարուած էր, եւ հետզհետէ զար-
դերուն վրայ նոր փոփոխութիւններ եւ
յաւելումներ կ'ըլլային. բայց օգոստ. 5ին,
չորեքշաբթի երեկոյ, ամէն պատրաստու-
թիւն լմնցած էր: Ապարանքին առջեւ սար-
աիկին մէջ հազարաւոր ժողոված էին թա-
փօրին դալն եւ զօրապետին դագաղին ներս
առնուելու տեսնելու: Շատեր հոն կը սպա-
սէին ժամերէ ի վեր: Ժամը եօթնի ատեն,
ախուր եղանակ մը լսելի եղաւ, հեծեալ
ոստիկանք եւ զօրականք սկսան երեւիլ:
Թափօրն էր որ կուգար: Անհնար է նկա-
րադրել տպաւորութիւնը զոր յուզարկաւո-
րութեան կառքին սգալի երեւոյթն ըրաւ
հանդիսատեսաց վրայ. գլուխներ բացուե-
ցան ի յարգանս: Կառքը կեցաւ ապարան-
քին մեծ դրան առջեւ, եւ սկստուաղիր
սահանորդք եւ այլը դագաղն փար առնե-
լով տարին ապարանքն, որոյ դրան մէջ կե-
ցած էին շատ երեւելի անձեր բաց գլխով
ընդունելու մեծ զօրապետին մարմինը: Դա-
գաղը ներս տարուելով դրուեցաւ սրահին
մէջ յատուկ տեղն որ վայելչապէս պատրաս-
տուած էր:

Առանց ժամանակ կորսնցունելու դիա-
պառք յարդարեցին ննջեցելոյն դէմքն որ
կառաց ցնցումէն փոքր ինչ եղծեալ էր:
Նախ պաշտօնական անձինք դացին նայե-
լու նախկին նախագահին մնացորդաց, եւ
ժամը 9 1/2 ին քաղաքապետութեան ապա-
րանքին երկաթեայ մեծ դռները բացուե-
ցան ժողովրդեան առջեւ: Անհուն բազ-
մութիւն մը պատրաստ էր ներս մտնելու,
բայց ոստիկանք եւ զինուորական պաշտօ-
նակալը գովելի աջարջութեամբ պահպանե-
ցին կարգն ու կանոնը: Արք եւ կանայք
եւ մանկաւ իրարու ետեւէ կարգաւ անցան
դագաղին քովէն մէկ ակնարկ նետելով զօ-
րապետին մարմնոյն վրայ: Հաշիւ եղած է
թէ միջին հաշուով ամէն մէկ վայրկեանի մէջ
100-120 հոգիք դագաղին քովէն անցած
են: Այսպէս շարունակեցին այն գիշեր
մինչեւ ժամը մէկ երբ ապարանքին դռնե-
րը փակուեցան եւ կախարիչները դրուե-
ցան դագաղին վրայ, եւ լուսանկարիչ մը
տեղւոյն պատկերն հանեց եւ կտրական լու-
սով: Հինգշաբթի առաւօտ քաղաքապետու-
թեան ապարանքին առջեւ չորեքշաբթի

գիշերուան բազմութիւնը ոչ միայն նուազած չէր, այլ եւ աւելցած էր: Մարդիկ համբերութեամբ կը սպասէին դռներուն բացուելուն եւ առթի մը տեսնելու կրանդ զօրապետին մարմինը: Հինգշաբթի առաւօտեան ժամը 6 ին դռները բացուեցան, եւ այն աստեղծ միջեւ ուրբաթ առաւօտեան ժամը մէկ ապարանքին շատ փողոցներու երկայնութեամբ մարդոց երկու կարգեր կային որ կը բազկանային ոչ միայն Նիւ Եորքցիներէ եւ Պրուքլինցիներէ, այլ եւ շատ մը գաւառացիներէ եւ գիւղացիներէ: Ոմանք ի նոցանէ որ կ'անցնէին դադաղին քովէն՝ ցաւոյ եւ կարեկցութեան սրտաշարժ խօսքեր կ'արտասանէին: Շատերուն հարկ էր ժամերով սպասել կարգի՝ ննջեցեալը տեսնելու պատեհութիւնը գտնելու համար, ուստի այսպիսի նախ քան մօտել կարգին մէջ նախաձաշ կամ ցերեկուան ճաշ մէկտեղ բերած էին, եւ մինչ մէկ կողմէն յուշիկ յուշիկ կը քաշէին կարգին հետաւոր ծայրը, միւս կողմէն իրենց քաղցը կ'անցունէին: Կարգին մէջ տեղ տեղ կային ամբողջ ընտանեաց անդամներ, և անսովոր չէր տեսնել հայր եւ մայր երեք չորս զաւակներով: Վերջապէս բոլոր քաղաքին և շրջականերէն շատ տեղերու բնակիչք շատ նեղութեան տանելով ջանացին վերջին անգամ մ'ալ տեսնել իրենց սիրելի գիւցաղնին երեսը:

Նիւ-Եորք արշաւած էր բանակ մ'օտարականաց, որոց թիւը մեծագոյն էր քան զթիւ Նէգէնաց որ կուուեցան ընդ հրամանատարութեամբ զօրապետին, որոյ յուղարկաւորութեան մեծ հանդէսը տեսնելու եկած էին այս օտարականք: Գրեթէ անհրնար է որոշել թիւն անոնց որ մօտէն հեռուէն հոս եկած էին յուղարկաւորութեան ներկայ գտնուելու, վասն զի հաղարաւորք կարող եղած չէին տեղ գտնել ընդարձակ հողէներու մէջ, եւ առանձին տուններ սենեակներ վարձած էին: Հողէներու մէջ հիւրերու թիւն սովորականէն եռապատիկ աւելի մեծ էր: Կը կարծուի թէ բոլոր օտարականաց թիւը չէր նուազ քան 400,000:

Թափորին ճամբուն վրայ յարմար տեղ ձեռք բերելու համար դրամ շխնայուեցաւ: Մէկ պատահանը քանի ժամու համար մինչեւ 50 թալէրի, 10 Անգլիական ոսկւոյ, եւ մէկ նստարան մէկ երկու ոսկւոյ վա-

ճառուեցան: Հողէներու մէջ ճամբու վրայ նայող սենեակներու համար շատ բարձր գիներ տրուած են, եւ այսպիսի սենեակ պահանջողներուն թիւն այնչափ մեծ էր որ ամենափոքր մէկ մասն հաղիւ կարող եղաւ ձեռք բերել ինչ որ կ'ուզէր:

Նրեսուն եւ ութ ժամու մէջ յորում զօրապետին մարմինն ի տես ժողովրդեան դրուեցաւ, իբր քառորդ միլիոն հոգիք ամէն կարգէ եւ սեռէ եկան անցան դագաղին քովէն կատարեալ կարգով եւ կանոնով: Մերունի մը այս կանոնաւորութեան համար սապէս վկայած է. «Ուէլլինկընի դքսին եւ Անգլիոյ թագուհւոյն ամուսնոյն յուղարկաւորութեանց ներկայ էի, բայց անոնք ոչ ինչ էին այս հանդիսին քով: Բոլոր այս կարգն ու կանոնն ինձ համար զարմանալի են: Լոնտոնի մէջ աղմկայոյզ ամբոխ եւ ժխոր մը կար: Հոս ամէն բան կը թուի թէ կը շարժի մեքենայանման կանոնաւորութեամբ:»

Տեսարանը որ կը պարզուէր քաղաքապետութեան ապարանքին դռներէն ներս՝ վսեմ եւ ահաւոր էր: Ապակեաւ ծածկուած դագաղը կը կենար այցելուաց առջեւ: Որմեր, ձեղուններ, սիւներ, սանդուղներ, ամենայն ինչ որ կը հանդիպէր աչաց, էին սեւ: Ալեւոր զօրականք, որ զիւցաղնին հըրամանին տակ պատերազմած էին, դագաղին գլուխը կը կենային լոխի լըջիկ: Ազգային պահապան զօրաց պաշտօնակալ մը ծալած կը կենար արձանի մը պէս դադաղին վարին ծայրը. համազգեստաւոր ուրիշ պաշտօնակալք որ իրենց գլխարկներուն եւ թեւերուն վրայ սեւ շղարչներ կը կրէին, կա'մ դագաղին մօտ կը կենային, կա'մ սեւով ծածկուած սրահին մէջ վեր վար կերթային կուգային:

ԵԱՆՔԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԽԱՆԴԱՂԱՆԻ

ԱՌ ԶԱՐՈՒՀԻ...

Լուռ էր բնութիւնն, ծովն իսկ խաղաղ գիշերոյն, Լըսուէր միայն թիափարի մը թընդիւն, Որ մանրամանը աղբներուն վրայէն Սահեցընէր մակցին փղբրիկ տերադէմ:

Էր մէն մենիկ՝ չ'ուռնէր նաեւ օգնական .
Մերթ երեւէր ամպոց մէջէն լուսնական .
Կայլակ կայլակ հոսէր ճակատէն քրտինքներ
Եւ մերթ ընդ մերթ սրտին խորէն հեծեծէր :

Յուշիկ յուշիկ յեզր մի ժայռի մերձեցաւ .
Ասդին անդին յուզմամբ հայիւ ըսկըսաւ ,
Անդ Զարուհի... գոչեց , երկիցս՝ ձայն չըկայ .
Ափսոս , ըսաւ , անշուշտ այժմէն ի քուռ կայ :

« Ա՛հ , Զարուհի՛ , գիտեմ դու զիս չեա ճանչնար ,
« Գէթ խընայե՛ , կիզիմ սիրովդ բոցավառ .
« Ի խոր ժայռի մակոյկս խրած ըսպասեմ ,
« Եկո՛ւր երթանք մէկտեղ սիրոյ դաշտին դէմ :

« Անդ փըրոր՝ բացառ դռներն պարտիզի
« Քեզ ըսպասէ ի խանդ ի խինդ կաթոգի .
« Վարդ եւ շուշան , ո՛վ Զարուհի , քեզ բազմոց
« Յասմիկ սըմբուլ սիրուն գըլխուդ գըլխանոց :

« Քաղցրաշըշուռն շընչէ զեփիւռ մշտայար
« Ընդ բոյր ի բոյր շոյիլ ճակատդ պայծած ,
« Պէս պէս նըւադ քեզ յօրինէ Երատով ,
« Թըռ-շուռք երգէն նաեւ սոխակք գեղգեղով :

« Ո՛վ Զարուհի՛ , դու կաս ի նիրհ անուշակ
« Ա՛հ չեա լըսեր դուռն ձայներուս աղաղակ...
« Աւա՛ղ սէրս ալ , պիտի մընայ յար Թագուն ,
« Զի՛նչ զիմ հառաչ խեղդուեցաւ մէջ ծովուն » :

Սպարթախտ ծառ մը կար մեն՝ մերձ յեզր
Պանդուխտ կըռուռնին որ անդ իւր բոյնն էր շիներ ,
Ուսաւ անուռն այն քաղցրախորժ , Զարուհի ,
Համայն գիշեր կանչէր յաւետ , Զարուհի... :

ԱՆԱՆՈՒՆ

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

Շ Ա Ք Ա Ք Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ

ՕԳՈՍՏՈՍ 31-6 ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Սպանիա փութոյ պնդութեամբ յառաջ
կը տանի իւր պաշտպանողական եւ յարձա-
կողական ոյժերու վերակազմութիւնն , ի
նախատեսութիւն պատերազմի մը :

—Անգլո-հնդիկ կառավարութիւնն յա-
ջողեր է Պէլուճիստանի Խանին հետ կնքել
պայմանագրութիւն մը , որով Խանն յանձն
կ'առնու , Ռուսիոյ դէմ պատերազմի մը մէջ
30,000 զօրք դնել Անգլիոյ դրամադրու-
թեան ներքեւ : Անգլիա իւր կողմէ կը խոս-
տանայ Աֆղանստանայ Էմիրին յատկացեալ

տարեկան նպատարին պէս նպատար մը տալ
Պէլուճիստանի Խանին , եւ երկաթուղի մը
չինել ի մէջ Խէլաթի եւ Քէդդահի :

—Գերմանական հողէն մինչեւ ցարդ ար-
տաքսեալ ռուսական եւ աւստրիական զօ-
րաց թիւը գրեթէ 10 000 ի կը հասնի , եւ
կը բաժնուի սապէս . Բոլոնացիք 937՝ ար-
հեստաւոր եւ վաճառական , 216 բոլոնացի
պանդուխտք կամ գաղթականք , եւ հրեայք
9,500 հոգի :

—Ֆրանսայի Հանրապետութեան Նա-
խագահին մէկ հրամանագիրն համայն Ֆը-
րանսայի ընտրողները կը հրաւիրէ հոկտ. 4
ին երեսփոխանական ընդհանուր ընտրու-
թիւններ կատարելու :

—Օգոստ. 23 ին , ամբողջ օրը Ռուսիոյ
արժէթղթոց մեծ «խարոյկահանդէս» մը
տեղի ունեցաւ պետական դանձարանի
դաւթին մէջ : Մինչեւ 20,000,000 ռուբլի
արժողութեամբ թուղթ յանձնուեցաւ բո-
ցերուն :

—Գարատաղի ժողովրդային զինուորու-
թիւնը մնայուն բանակի մը պիտի վերած-
ուի , այսինքն՝ փոխանակ պատերազմի ատեն
միայն ի զէն կոչուելու , կանոնաւոր ժամա-
նակներ զինուոց ներքեւ պիտի մնայ , եւ
զինուորական խիստ կըթուլիւն մը պիտի
ստանայ : 500 հոգիք եւրոպական դրու-
թեամբ կըթուլիւն յետոյ , իբրեւ ենթասպայ
պիտի դրուին ի գլուխ հետզհետէ հաւա-
քելի զօրաց Նիքիդա իշխանը ռուս սպայ-
ներ բերել տուած է իբրեւ կըթիչ : Գա-
րատաղ ապաքէն իւր թէ՛ զինուորական եւ
թէ՛ մտային ու բարոյական կըթուլիւնը
կ'ստանայ Ռուսիայէն : Սեպտ. 8 ին Նիքի-
թա իշխանին երեք աղջկունք Վիէննայէ
անցան Ռուսիա երթալու համար , ուր կը
դաստիարակուին :

—Հնտախտի երեւումն ի Բալէրմօ , ուր
արդէն մարդիկ մեռան այս ամստէ , ընդ-
հանուր երկիւղ պատճառեց Նաքօլիի մէջ :
Սեպտ. 10 ին ամբոխն ուղեց քաղաքէն ար-
տաքսել կարգ մը ուղեւորներ որք Սիկիլիա-
յէն եկող նաւէ մը դեռ նոր դուրս ելած
էին : Բայց յաջորդ օրը ժողովուրդն հան-
դարտեցաւ կառավարական հրամանադրոյ
մը երեւմամբ որ եօթնօրեայ մաքրութիւն
(+աբանիէն) հարկ կ'դնէ Բալերմոյէ եկողներուն
վրայ : Իտալիոյ այլ մասանց մէջ հնտախտն

յոյժ թոյլ է : Քանի մը կասկած ելի դէպքեր կը ծանուցուին Արեւմտայէ :

— Զարն եւ Զարուհին մտադիր են ամբողջ սեպտեմբեր ամիսն անցունել ի Տանի մարքա :

Ն Ե Ր Ք Ի Ն

— 0 —

Կ. Պոլսոյ Անգլիական նորընտիր դեսպան Սըր Թորընթըն յառաջիկայ հոկտեմբերի վերջերը միայն մայրաքաղաքս պիտի գայ Բեդրասպուրկէն :

— Կը կարծուի թէ Րիազ փաշա պիտի յաջորդէ Եգիպտոսի նախարարապետ Նուպար փաշայի որոյ առողջական վիճակը խանգարեալ է :

— Գուրպան Պայրամիի տօնը կ'սկսի այս կիրակի օր եւ կը տեւէ մինչեւ չորեքշաբթի : Այս առթիւ մէկ մէկ ամսական վճարեցան կառավարական բոլոր պաշտօնէից, եւ երկերկու ամսական՝ զօրաց :

— Բաղէշի կուսակալ Արիֆ փաշա եւ Սղերդի կառավարիչ Րէշատ պէյ իրենց պաշտօնատեղին ուղեւորեցան :

— Տրոց վարչութեան հաշուակալութեան դիւանի քարտուղար Ֆէրիտ Պէյ՝ Քարբերդի Տէֆթէրտար անուանեցաւ :

— Սեւանիի նորընտիր կուսակալ Հասան փաշա Նիշանը Իմթիյազի ոսկի եւ արծաթ շքանշաններն ստացաւ Վեհ. Սուլթանէն եւ իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ շաբթուս մէջ : Իսկ Իզմիրի եւ Սուրիոյ նորընտիր կուսակալք պիտի մեկնին Պայրամէն յետոյ :

— Մաքսային Տեսչութիւնը ներկայ ամսոյ առաջին օրէն 90,000 ոսկի յանձնեց Րնդհ. Պարտուց վարչութեան :

— Գաւառաց կրթական քննիչներու պաշտօնը ջնջուած է, կ'ըսէ Թարիֆ :

— Անդ. արատասովոր պատուիրակ Սըր Ուոլֆ կը շարունակէ իւր խորհրդակցութիւններն օսմ. լիազօր պատուիրակաց հետ : «Մէմօրիալ Տիբլումաթիք» հետեւեալ տողերը կը գրէ Սըր Ուոլֆի պաշտօնին նշկաամսմբ :

«Օսմ. դիւանադիտական ակումբը եւ եւրոպական դիւանադիտութիւնն այլ ևս լրջօրէն չեն նկատեր Սըր Հ. Ուոլֆի պաշտօնն, որ շատ օրոշ և լիազօր իշխանութիւն ունենալ չի թուիր : Կրնայ կարծուիլ թէ այս պաշտօնի բուն նպատակն էր ի

վեր հանել այս պետական մարդուն կարեւորութիւնն, որ է միանգամայն բարեկամ Լորտ Ռանտոլֆ Չըրչիլի և մին ի կարեւոր անդամոց պահպանողական կուսակցութեան : Երբ Պ. Կլատտոն կազմեց զ'իւր վերջին նախարարութիւն, Պ. Կոչըն, իբրեւ նշանաւոր անդամ մը ազատական կուսակցութեան, կը գտնուէր նոյն կացութեան մէջ յորում է այսօր Սըր Հ. Ուոլֆ պահպանողական կուսակցութեան մէջ : Զկրնալով նախարարական պաշտօն մը տալ, Պ. Կլատտոն զՊ. Կոչըն ղրկեց Կ. Պոլիս յատուկ պաշտօնով, զոր Պ. Կոչըն ընդունեց պայմանաւ որ թոշակ չստանայ, այլ միայն իւր ընելիք ծախուց գումարն ընդունի կառավարութենէն : Հարկ էր նմանօրինակ դիմք մը գտնել Սըր Հ. Ուոլֆի համար, պաշտօն որ քիչ մը փայլ ունենար, և Եգիպտոսի խնդիրն ինքնին պատրաստ էր և յարմար : Այսպէս աւասիկ կը խորհրու օսմ. դիւանադիտական ակումբոց մէջ, և այս պատճառաւ Գուռն դիւանադիտութեամբ կը վարուի այս գործոյ մէջ : »

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի Ն

— 0 —

Կը յիշուի թէ Պատրիարքական և Առաջնորդական հրովարտակաց անփոփոխ տրուելուն առթիւ, ըստ որոշման Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ, Խառն Ժողովը շնորհակալեաց Ուղերձ մը մատուցած էր Բարձր. Մեծ-Եպարքոսին, զայն Օգոստ. Սուլթանին ներկայելու խնդրանօք :

Արդ, Դատական և Կրօնական գործոց նախարար Վսեմ. Հասան Ֆէհմի փաշա՝ Բարձր. Սայիտ փաշայի կողմէ իրեն հաղորդուած ծանուցագրի մը համաձայն՝ պաշտօնագիր մ'ուղղելով մեր Ազգ. Պատրիարքարանին, կը յայտնէ թէ յիշեալ շնորհակալեաց Ուղերձն Օգոստ. Սուլթանին մատուցուած և Ն. Կ. Վեհափառութեան բարձր գոհունակութեան արժանացած է :

— Ամեն. Ս. Պատրիարք հայրը նամակ

մը գրելով Երուսաղեմայ Վսեմ. Կառաւարչին, հօգեւելոյն Եսայի Ս. Պատրիարքի մահուան առթիւ Աղգին կրած յաւն հաղորդելով, խնդրեց որ Երուսաղեմայ Պատրիարքական Աթոռոյն ներկայ թաւուր վիճակին մէջ, իւր պաշտպանութիւնն առաւել ևս նուիրէ:

—Մշոյ Ս. Կարապետի նորընտիր վանահայր Գեր. Արիստակէս եպիսկ. Դերձակեանի պաշտօնը վաւերացնող կայսերական հրովարտակը Պատրիարքարան հասած լինելով, զրկուեցաւ Ն. Գերապատուութեան ի Տիգրանակերտ՝ ուր կը գտնուի Արիստակէս Սրբազան տեղւոյն աղգային դործերը կարգադրելու առժամեայ պաշտօնով:

—Ամեն. Ս. Պատրիարք Հայրը նախընթաց օր Նարը-գաբուի, Սամաթիոյ Նօր-թաղի և Թօր-գաբուի աղգային վարժարաններն այցելեց:

—Քաղաքական ժողովոյ անդամներէն Պոյաճեան Յովհաննէս Էփէնտի Աղգ. Վարչութեան պաշտօն ստացած լինելով Պանտըրմա երթալ և տեղւոյն աղգային դործերը կարգադրել չորեքշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէն, ի ձեռին ունենալով պէտք եղած պաշտօնագրերն և Աղգ. Պատրիարքարանէն Պանտըրմայի կառավարչին ուղղեալ յանձնարարագիր մը:

—Զմիւռնիայէն հասած մասնաւոր տեղեկութիւնք կը հաւաստեն թէ Ամեն. Տ. Մելքիսեդեկ Սրբազան մըտադիր է եղեր առաջնորդութենէ հրաժարիլ և առանձնանալով գրական աշխատութեամբ պարապիլ (Հայրէնէ):

—Աւասիկ պատճէնն Խառն ժողովոյ վերջին նստին մէջ Քաղաքական ժողովոյ անդամոց միաձայնութեամբ և Կրօնական ժողովոյ անդամոց մեծամասնութեամբ ստորագրեալ Բանաձեւոյն.

Ըստ որում խնդիրը կը պատկանի աղգային Երեսփոխանական ժողովոյ բարձրագոյն ձեռնհասութեան:

Կեդրոնական Վարչութեան Խառն

Ժողովն չի կրնար յատուկ որոշում մը առ Աղգային ժողովն բերել Կաթողիկոսական խնդրոյն ընդունած լուծման նկատմամբ:

Հետեւաբար, Աղգային ժողովոյն իմաստուն որոշման թողլով այս պարագային մէջ եւս Աղգին կամքն արտայայտել, Խառն ժողովն պարտք կը համարի սակայն դիտել տալ թէ, ըստ որում Ամեն. Մակար Սրբազան իրրեւ բարձրաստիճան և երիցագոյն եպիսկոպոս Աղգին չունի եւ չի կրեր իւր վրայ ո՛ր և է արգելք և անպատեհութիւն ամենայն Հայոց Հայրապետ լինելու:

Եւ ըստ որում պէտք է ի կշիռ առնուլ ժամանակիս փափուկ հանգամանքներն, հարկ անհրաժեշտ է միայնակի որոշման յանգիլ, յորում կարելիութեան սահմանէն դուրս չենելով՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ միութիւնն և աղգային իրաւունքն պահպանուին:

—Աղգ. զստորադրեալ փճակի բարւոքման վրայ խորհրդակցելու համար հրաւիրեալ Ուսուցչական Միութեան առաջին գումարումը տեղի ունեցաւ անցեալ կիրակի:

Թէեւ անձրեւոտ օգին պատճառաւ բաղձաթիւ ուսուցիչը չէին կրցած ներկայ գտնուիլ, սակայն ներկայ ժողովականք, յետ խորհրդակցութեան, խնդրեցին Մուրատեան Եղիազար Էփէնտիէն՝ որոյ կը պատկանէր այս գումարման նախաձեռնութիւնը, քանի մը փորձառու դաստիարակաց հետ խորհրդակցելով «Ուսուցչական Միութեան» կանոնագրի ծրագիր մը խմբագրել և միանգամայն մանկավարժական թերթի մը հրատարակութեան համար պէտք եղած նախապատրաստութիւններն ուսումնասիրելով ծրագիր մը ներկայել Միութեան յառաջիկայ նստին որ տեղի պիտի ունենայ մէկ ամիսէն:

SUN FIRE OFFICE
PHOENIX FIRE OFFICE

Կը խնդրուի այն անձերէն, որ 1885 մայիս 17 թուականէն յառաջագոյն առաւ-
հովադարական մուրհակներ (քօ Է) ունին,
թուական յորում արձակեցինք մեր գրադիրն
Պ. Ն. Իզմարիտէս՝ լրագրաց մէջ հրատա-
րակեալ ազդին համաձայն, կարելի եղածին
չափ շուտ ներկայել զայնս ի բնութիւն
ստորագրելոց իրենց գրասենեկին մէջ, Ղա-
լաթիւ, Քարանթինայի փողոց, թիւ 11:
Հ. Ճ. ՀԱՆՍՈՆ
Վ. Վ. ՀԱՆՍՈՆ
Գործակարգ

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

Ն Կ Ս Ր Ս Գ Ր Ս Կ Ս Ն

Ուղեորներն է Հայաստանի Գաւառ
Արեւելեան Տաճկաստանի

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

Սարէն և Ձորեն, Հնէն և Նորեն
ՊԻՏՈՆԻ ԳԻՏՆՈՅ


ՄԱՍՆ Գ. Լ ՎԵՐՋԻՆ

ՊԱՐՈՒՆԱՌԻԹԻՒՆ

Ձօն առ Խրիմեան Հայրիկ. Կանխարան.
Հրահանգ. Տեսութիւն մը. Լեզուաբանական
գիտողութիւն մը. Նամակներ. Ագրեբանի
գաւառն և իւր գիւղորայքն. Քաջբերուն-
եաց գաւառն և իւր գիւղորայքն. Հարբ
գաւառն և Մանագիւրտ՝ հին բերդաբա-
ղաքն իւր գիւղերով. Կարմիր վանքն և
կռապաշտական քարը. Ապահունեաց կամ
Հացեաց գաւառն (Վերին և Ներքին Պու-
լանքաներ) իւրեանց գիւղերով. Մէճիւ,
Լուի գեղջիւհին, Հասան-Կորան և իւր բը-
նակիչքն. Հետաքրքիր յայտնութիւն և հին
խաչաքար մը. Խնուս գաւառն և իւր գիւ-
ղորայքն. Ս. Կարապետի ամայացեալ վանքն.
Կարնոյ գաւառն, քաղաքն, գիւղորայքն և
վանորայքն. Հայ գիւղացւոց տարեկան կե-
նաց չորս եղանակի համառօտ նկարագիրն
իւրեանց բոլոր երեւոյթներով. Քրդաց վե-
րայ համառօտակի. Գաւառական կրճատեա-
նեւանք:

ԺԱՄԱԳՈՐԾ
Գ. Է. ՍԵԼՎԱ ՃԵԱՆ

244 — ՄԱՀՄՈՒՏՄԱՍՏԱՆԻ ԳԼՈՒԽ — 244



30 142
ԾՐՆՔ ՂՐԾ
Ճարտարապետներէ համ-
բաւաւոր գործարաններէ
միոյն մէջ խիստ խնամք
պատրաստել տուած է նշա-
նակեալ գնով նմանը ցարդ-
չտեանուած 15 սանդիսեղը
երկայնութեամբ խիստ ձե-
ւաւոր, զարնող, շարաթը
մի անգամ լարուող, պատի
ժամացոյցներ: Երբ ընդու-
նելութեան սրահներու, սե-
նեկաց, վարժարանաց եւ
գրասենեկաց վայելուչ եւ
յարմարագոյն են, և որոց
երկար տարիներ ամենայն
կանոնաւորութեամբ բանին
կ'երաշխաւորէ:

Յիշեալ վաճառատան
մէջ կը գտնուին նաեւ խիստ
սաճան գներով լաւ բանող
ընտիր ժամացոյցներ:

Գաւառներէ եկած յանձ-
նարարութիւնը փութով եւ
ճշդութեամբ կը կատար-
ուին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Յօդուք

Հ. ԱՆԴՐ. Վ. ՃԵՐՄԱԿԵԱՆ

Վիէնայի Մխիթարեանց Միաբա-
նութենէն Հ. Անդրէաս վարդապետ
ճերմակեանի հեղինակած այս Գործ-
նական Թուարանութեան դասագիր-
քը բաժնուած է երեք հատորներու,
և նպատակն է աշակերտաց մտաց աչ-
քին առջեւ թուարանական գործողու-
թեանց այլեւայլ փոփոխութիւնները
պարզ գնել, որպէս զի ինչ որ գործո-
ղութեանց մէջ նիւթապէս կը կատար-
ուի, նոյնը մտաց մէջ յայտնագոյնս
բացատրուած ունենան:

Գին առաջին և երկրորդ հատոր-
ներու 75ական սանդիմ, և երրորդ հա-
տորին՝ 1. 25 սանդիմ:

Կը գտնուի Բանկալթի, Վիէնայի
Մխիթարեան Հարց Դպստենակը:



ՀՐԴԵՆԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

ՆՈՐԹ-Ն ԴՐԻԹԻՇ ԷՆՊ ՄԷՐԲԵՐՆԹԱՅԼ

Լոնդոնի և Էդինբուրգի ապահովումներ

Ընկերություն	Սնուց. Լիբ.
Արտոնեալ դրամագլուխ	3,000,000
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,500,000
Վճարեալ »	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	4,592,235
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	3,841,494
	6,058,429
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	4,186,865
Կենաց ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	551,307
	4,738,172

NORTHERN

Assurance company

ՆՕՐԹ-Ն ԸՐՆ

Լոնդոնի և Էդինբուրգի ապահովումներ

Ընկերություն	Սնուց. Լիբ.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ »	300,000
Պահեստի դրամ հրդեհի պատահականութեանց դէմ	814,874
Կեանքի պատահականութեանց դէմ պահեստի դրամ	4,778,300
	2,890,474
Հրդեհի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	520,206
Կեանքի ճիւղէն հասոյթ 1883 տարւոյ	254,372
	774,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքիս ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծառայուին թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, պիտի սիրով ծառայեմ ձեր ապահովութեան, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ գիւրութիւններ կը մատուցանէ։ Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և գիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բաժնիներու ինքզինք ներկայացնել։ Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները։

MARITIME

Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովումներ ընկերություն
Դրամագլուխ 500,000 Անգլ. փրա

(Ստորագրեալը, շրջանաւերու և առաջատանաւերու մէջ ի վաճառքներն ու կարասիները իրատ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ։

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմեն Կալաթիա, Քոմիսիոն Խանի անկիւնը երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակին, առ

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակատար յէշեալ Ընկերություն
Գ.Ա.Ն.Ի.Կ. Յ. ՍԵՐՈՒԲԱՆ

ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՆԻ ԴԷՄ

ԲԻԼԱՅԸՆՍ

Ծովային ապահովագրութիւն. - Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Վ. Ուիլիամս, Եօրկիատիս Խան Պահէ - Գարու, Պոլիս. կամ Ղալաթիա, Ալէքսիատի Խան Թիւ 15։

507

Արտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻԲ ԼՐԱԳՐՈՅ